


ԱՐԱՋԻ



891. 995  
Ա-82

ՊԵՏԶՐԱՏ



891 995

2011-05

Ա-82

ԱՐԱՋԻ

# ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ



ՊԵՏՐՍ

ՀԼԿԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱ-ՊԱՏՄՆԵԿԱԿԱՆ ԲԱԺԻՆ

ՁԵՐԵՎԱՆ

1988

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ



36002-62

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

3601

360126

## ԿԱՐՄԻՐ ԿԱՐՈՆ

1.

— Վարդանը դալիս ա, Վարդանը դալիս ա,— տարածվեց գյուղում, ու մի քանի բուսակների հետո յերեխաները լցվեցին Վարդանենց տան առաջ:

Բոլորը նայում էին աչքերը չռած ու դարձանում,— մի՞թե ես են առաջվա Վարդանն ե. ի՞նչ մեծացել ե, ի՞նչ լավ կարճիր բանակային դարձել, ի՞նչ լավ շորեր ու կոշիկներ ունի...

Իսկ Կարոն՝ Վարդանի փոքր յեղբայրը, ուրախությունից աչքերով ուտում էր Վարդանին: Նրա ամեն բանից քեֆը դալիս էր. ձեռքը քսում էր Վարդանի շորերին, կոշիկներին, մանավանդ հավանում էր նրա թուրն ու կաշվե կապիչը, փորից այնպես լավ, քաղաքի կաշվի հոտ էր բուրում: Կարոն շատ կուզեր այդպիսի մի գոտի ունենալ իր փայլուն, դեղին դարդարանքներով:

Խոսելիս Կարոն բոլորովին մոռանում էր Վարդանին, կարծես ուզում էր նրա ամեն մի

խոսքը բռնի ու զրպանը դնի: Ա՛խ, ինչ լավ եր  
խոսում Վարդանը, — իսկը ուսում առած մար-  
դու նման:

Մի խոսքով՝ Կարոն այնպես եր ուրախա-  
ցել, վոր ուզում եր վոչ ուտի, վոչ խմի, այլ  
միայն Վարդանի մոտ լինի: Նա Վարդանի  
կողքից չեղ հեռանում, այնքան եր հարց ու  
փորձ անում, այնքան եր ձեռքը քսմսում նրա  
չորերին, վոր մայրն ել չհամբերեց, բարկա-  
ցավ Կարոյի վրա:

— Ա՛յ տղա, քա՞նի Վարդանի յերեսը վեր  
բերես, մի թող յերեխիս կուշտ մտիկ  
անեմ ե՛... .

2.

Առավոտը վաղ այն անպիտան փոքրիկ  
աքլորը յեկավ դռների մոտ, մի դիլ ծուղրու-  
ղու կանչեց, Կնրոյին դարթեցրեց: Չարթեց  
Կարոն ու սկսեց մտածել, թե ի՞նչ լավ կլինի,  
յեթե ինքը կարմիր բանակային դառնա, բայց  
այդ յե՞րը կլինի: Նա սկսեց մտաներով հաշ-  
վել. չե՛, դեռ յոթ տարի կա. Կարոն չի կա-  
րող այդքան յերկար սպասել... ա՛խ, նա կու-  
զեր հենց հիմի գնար քաղաք, Վարդանի նման  
լավ տղա դառնար...

Այսպես մտածում եր Կարոն, յերբ աք-  
լորը մի անգամ ել ծուղրուղու կանչեց: Կարոն  
վեր կացավ, աչք անեց տանը, տեսավ, վոր

Վարդանը դեռ քնած է, իսկ մայրը, տատն ու  
քույրը դուրսը՝ բախում լվացք են անում: Կա-  
մացուկ, բորիկ վոտներով մոտեցավ, վերցրեց  
Վարդանի շորերը, շտապ-շտապ հագավ, ու  
լայն կոշիկները վոտքին քարշ տալով, դուրս  
յեկավ բակը:

Առաջինը Կարոյին նկատեց մայրը:

— Վ՛յ, անպիտան, եղ դու յե՞ս. եղ ի՞նչ  
ես շորերը փչացնում, չե՞ս վախենում Վար-  
դանից:

Իսկ տատը տեսնելուն պես ծիծաղից  
թուլացավ:

— Ա՛յ, գիժ՝ Կարո, — ասում եր նա. —  
գնա՛, գնա՛ քաղաք, վոր դու ել եղպես լավ  
տղա դառնաս, լավ նախշուն շորեր հագնես:

— Տատի, թող ինձ տանեն քաղաք, տե՛ս  
ինչեղ եմ անում ե՛... .

Ասաց Կարոն ու ձգվեց, փքվեց, սկսեց  
մեծի քայլերով անց ու դարձ անել գավթում:

Հանկարծ ներսից լսվեց Վարդանի ձայնը:

Կարոյի սիրտը դողաց: Շփոթվելուց չեր  
իմանում ի՞նչ անի: Նա մոտեցավ տատին,  
հուսալով, վոր նա կազատի իրեն դժվար  
դրությունից, բայց տատը վեր կացավ ու  
բռնելով Կարոյի ձեռքից, ներս տարավ տուն:

— Ա՛րի, ա՛րի, ա՛յ ավագակ Կարո, մի  
ասեմ Վարդանին, ականջներդ քաշի:

Կարոն այնպես եր կարմրել, ինչպես կար-  
միք խնձոր. նա սպասում եր, վոր Վարդանը

կբարեկանա, բայց նա, տեսնելով Կարոյի լայն կախ ընկած շորերը ու մինչև ականջները իջած գլխարկը, սկսեց ծիծաղել:

— Ա՛յ դու անպիտան, եղ ի՞նչեր ես անում, — ասաց նա, մատով թեթև խփելով Կարոյի բթին:

Հազիվ հող Կարոն հանգատացավ. ա՛յ թե վախենում եր ե՛... .

3.

Անցել եր յերկու շաբաթ:

Վարդանի վերադառնալու որն եր: Ձին արդեն թամբած կանգնած եր դռանը, վրան մէ լիք խուրջին ձգած, մեջը ճամբի պաշար ու սպիտակեղենը դարսած: Վարդանը հոր հետ նախաճաշելուց հետո դուրս յեկավ, փաթաթփեց տատին, մորն ու քրոջը ու ձին նստելով, հարցրեց.

— Բա մեր Կարոն ուր ա՞:

— Ո՞վ ա իմանում, խաղով ընկած կլինի, — ասաց տատը:

— Իե մնաք բա՛րով, — ասաց Վարդանն ու ձին քշեց:

Դյուղից դուրս գալով, Վարդանը նկատեց ճանապարհի մեծ քարի վրա մի տղա: Մի քիչ ել վոր մոտեցավ, տեսավ Կարոն ե:

— Եստեղ ինչ ես չինում, — ասաց Վարդանը, ձին կանգնեցնելով:

Կարոն մոտ վազեց Վարդանին, բռնեց նրա վտուխը ու սկսեց աղաչել:



— Վարդան ջան, ինձ ել տար քաղաք,  
ի՞նչ քրոնք եմ, աղաչում եմ...

— Ի՞նչ ես ասում, վո՞նց թե քաղաք,  
ի՞նչի համար:

— Վարդան ջան ուզում եմ կարմիր բա-  
նակային դառնամ, ուսում առնեմ քաղաքում,  
ի՞նչ քրոնք եմ հետզ տար...

— Ուսումը եստեղ կառնես, իսկ յերբ կմե-  
ծանաս, հետո ել կարմիր բանակային կդառ-  
նաս. գնա՛, գնա՛ տուն... սո՛ւս կաց, ի՞նչ ես  
լաց լինում:

Բայց ո՞ւմ ես ասում. Կարոն ավելի ուժ-  
գին սկսեց լաց լինել:

— Քեզ քաղաքում ի՞նչպես պահեմ. չգի-  
տե՞ս, վոր գորանոցում եմ ապրում—ասաց  
Վարդանը:

Բայց նա ինչ ել ասում էր, Կարոն մի  
գլուխ լաց էր լինում ու աղաչում: Այնքան  
լաց յեղավ, վոր վերջը Վարդանը տեսավ ճար  
չկա աղատովելու, համաձայնվեց քաղաք տա-  
նել Կարոյին:

— Դե ա՛րի, գավակիս նստի՛, — ասաց  
Վարդանը:

Կարոն մի վայրկյանում մոռացավ իր  
լացն ու Վարդանի ձեռքից բռնելով, բարձ-  
րացավ, նստեց նրա քամակին:

Ուրախ էր, վո՞նց էր ուրախ Կարոն: Դեռ  
աչքերը թաց էյին արցունքներից, բայց ար-  
դեն ծիծաղում էր, ու վրտներով հրում էր

ձիուն, վոր շո՛ւտով, շո՛ւտով հասնեն քաղաք  
ու Վարդանը հանկարծ միտքը չփոխի՝ հեռ  
չաանի գյուղը:

Ճամբին Վարդանը մի գյուղացու հետ  
ապսպրեց, վոր իրենց տանն իմաց անի, թե  
Կարոյին տանում է քաղաք, թե չե ո՞վ գիտե,  
ինչեք կարող էյին մտածել:

Կարոն դրա վրա արդեն պինդ համոզվեց,  
վոր իսկապես գնում է քաղաք:

Ի՞նչ ուրախություն...

4.

Ի՞նչեք ասես չեք տեսնում Կարոն քաղաքի  
ճամբին—սայլեր, Փուրգոններ, ուղտեր: Ամեն  
ինչ նրան ուրախացնում էր, նույնիսկ աչնան  
ամպամած որը. մանավանդ նա շատ ուշախա-  
ցավ, յերբ պատահեց իր ընկեր Սուրենին,  
վոր հոր հետ վերադառնում էր ինչ վոր գյու-  
ղից:

— Եղ ո՞ւր ես գնում, — բարձր ձայնով  
հարցրեց Սուրենը:

— Քաղաք եմ գնում, — պատասխանեց  
Կարոն, ինքն ել զարմանալով իր ասածի վրա:

Ճամբին մի մեծ գյուղում հանգիստ առ-  
նելով, Վարդանն ու Կարոն նորից շարունա-  
կեցին ճանապարհը ու յերեկոյան գեմ հասան  
քաղաք:

Ահա և քաղաքը: Ի՞նչ նախշուն է քաղա-  
քը, մտածում էր Կարոն — ի՞նչ մեծ—մեծ,

սիրուն տներ, լայն-լայն փողոցներ են, ի՞նչ լավ հազնված մարդիկ:

Քաղաքի ծայրին Վարդանն իջավ ձիուց ու Կարոյին նստեցրեց թամբի վրա: Ձին կամաց-կամաց եր գնում, իսկ Կարոն աչքերը չուած դեռ ու դեն եր նայում, ամեն բանի վրա զարմանում: Մի տեղ միայն Կարոն շատ վախեցավ, յերբ դիմացից ինչ վոր մի սև բան յեկավ արագ-արագ, սարսափելի ձայնով ճչալով: Ձին խրտնեց, մի կողմի վրա ընկավ, քիչ եր մնում վայր գցի Կարոյին:

Մի՛ վախիլ, — ասաց Վարդանը, մոտենալով Կարոյին. սա նստելու մաշին ա, սպասումորիլ են ասում:

«Ես ինչ սասանի սայլ ա, — մտածում եր Կարոն ու շարունակ վախենալուց հետ եր նայում, վոր տեսնի՞ Վարդանը գալիս ե՞, թե չե՞:

Վերջապես մի տեղ Վարդանը կանգ առավ, ներս մտավ մի տան լայն բակը, ձին պահ տվեց, վոր կերակրեն, իսկ ինքը խուրջինն ուսին, Կարոյին հեան առած, մի քանի փողոց ել անցավ ու ներս մտավ մի մեծ տուն:

Վարդանի յերեվալուն պես վրա թափվեցին նրա ընկեր-կարմիր բանակայինները. ամեն կողմից ձեռքեյին տալիս, համբուրում:

— Վարդան, մի նստի տեսնենք, ի՞նչ կա, ի՞նչ չկա. — ասաց ընկերներից մեկը:

— Ընկերներ, մինչև խոսք ու զրիցս մի

շտապով գործ ունեմ. — ասաց Վարդանը — յեկեք խորհուրդ անենք, — ես տղան իմ փոքր յեղբայրն ե, անունն ել Կարո. առաջուք լաց յեղավ, աղաչեց, վոր բերեմ քաղաք. շատ լաց լինելու պատճառով ճարս կտրած՝ հետս բերի: Հիմա դուք ասեք, ի՞նչ անեմ, ի՞նչպէս տեղավորեմ սրան:

Կարոն մի քանի քայլ հեռու կանգնած, սիրտը լքլքալով նայում եր Վարդանի ընկերներին. նա լսում եր, վոր իր մասին են խոսում և անհամբեր սպասում եր, թե ինչ կվճռեն: Վերջապէս Վարդանի ընկերներից մեկը համաձայնվեց Կարոյին տեղավորել իր յեղբոր մոտ, վորը բանվոր եր: Կարոն, Վարդանի դեմ քիչ նայելով հասկացավ, վոր իր գործը հաջողվել է:

Նույն յերեկոյան Կարոյին տարան իր նոր բնակարանը:

5.

Կարոն համարյա ամբողջ օրն անց եր կացնում զօրանոցում, հեռուում եր զինվորական բոլոր վարժություններին: Մի շաբաթից հետո կարմիր բանակայինները վճռեցին Կարոյին իրենց զնդի վորդեգիր դարձնել, ու կարել տվին նրա համար իսկական կարմիր բանակայինի շորեր...

Կարող ե՞ք յերեվակայել Կարոյի ուրա-

խուժյունը: Ծորերը հազին ել հանգստութիւն չունենք. նայում եր կրծքին, թեվերին, կոշիկներին ու չեր հավատում աչքերին, կարծես հարցնում եր ինքն իրան—ես յե՞ս եմ... Փողոցներով անցնելիս միշտ կանգ եր առնում խանութների մեծ պատուհանների առաջ, վարտեսնի իր պատկերը կարմիր բանակայինի շորերով: Ա՛խ, յեթե գյուղի իր ընկերները տեսնելին, ա՛յ թե կգարմանային...

Բոլոր կարմիր բանակայիններն ուզում էին կարոյին. մեկը տետր եր ընծայում, մյուսը գրիչ ու մատիտ, մի ուրիշը գիր եր սովորեցնում: Շուտով նրան միացրին անգրագետների խմբակին ու կարոն սկսեց իր կանոնավոր պարապմունքները:

Մի մեծ ուրախութիւն ել կարոյի համար վարդանի ընծայած այբբենարանն եր: Ամբողջ որը կարոն այդ գրքից չեր բաժանվում, գիշերն ել բարձի տակն եր դնում: Նա շատ անհամբեր եր, ուզում եր միանգամից ամբողջ գիրքը սովորել, վերջացնել:

Որեցոր նա սովորում եր նոր տառեր ու առաջ անցնում: Մի անգամ ել նա գարմանքից վեր թռավ տեղից, յերբ հանկարծ կարգաց իր գրքում:

«ԿԱՐՄԻՐ ԿԱՐՈՆ ՃԱՌ Ե ԱՍՈՒՄ ԻՐԵՆՑ  
ԳՅՈՒՂՈՒՄ»

— Եղ հոյս եմ, — մտածում եր կարոն, ու կարդում, մեկ ել կարդում, գարմանում թե եղ ո՞վ ե այդպես լավ բան գրել:

Ձե՛, կարոյի հետ այժմ ել կատակ անել չեր կարելի՛ նա արդեն կարմիր բանակային եր, նրանց վարժութիւնները սովորել եր, քայլում եր նրանց նման, կանոնավոր ձգված, ու հիմա ել գիր եր սովորում. գրքի մեջ ել իր անունը կար. նա այժմ ինքն իրեն անվանում եր «կարմիր կարո»...

Այսպես՝ կարոն ապրում եր քաղաքում, սովորում եր, ու ինչ վոր իմանում եր, աշխատում միաքը պահել, վոր գնա իրենց գյուղում ընկերներին պատմի: Ինչ վոր գիրք եր ճարում, այն ել եր պահում՝ գյուղ տանելու համար:

Ձմեռը նա ծանոթացավ պիոներների հետ, ու մի ամսի չափ հաճախելով նրանց պարապմունքներին, տեղեկացավ գործին ու հետո ընդունվեց պիոներական կազմակերպութեան մեջ: Այժմ արդեն նա վարժ կարդում եր, համարձակ խոսում ու վիճում եր իր նոր ընկերների հետ:

Բայց կարոն մի գաղտնիք ուներ, վորի մասին վոչ վոքի չեր հայտնում. — նա շարունակ գիտում եր, վորպեսզի հետո այդ որինա-

կով կաղմակերպի պիտոներներին իրենց գյուղում: Մի ուրիշ գաղտնիք էլ կար—նա շարունակ մտածում էր, թե ի՞նչպես մի պիտոներական թմբուկ ճարի իրենց գյուղի պիտոներների համար...

Շատ հոգսեր ուներ Կարոն, բայց գլխավոր հոգսն այն էր, վոր սովորի, շատ սովորի:

Գարնանը նամակ յեկավ գյուղից. հարց ու բարևից հետո գրած էր, թե—«Կարոյին ուղարկիր, գործի ժամանակն է»: Վարդանը կարդաց նամակն ու ժպտալով ասաց Կարոյին:

— Հը՛, ի՞նչ կասես, Կարո, գնում ե՞ս, թե չե:

Կարոն գլուխը կախ նայում էր հատակին, չկարողանալով պատասխանել: Նա, իհարկե, չէր ուզում գնալ, բայց ամաչում էր Վարդանից, չէր կարողանում ասել:

— Դե լա՛վ, — ասաց Վարդանը, — յերեվում ե՛՛ չես ուզում, մի տարի էլ մնա, յեկող գարնանը կերթաս:

Կարոյի դեմքը բացվեց. նա չափից դուրս ուրախ էր, վոր ելի պիտի մնա ու սովորի, նա փաթաթվեց Վարդանին ու ասաց.

— Ելի յեմ ուզում սովորել, խնդրում եմ թողնես եստեղ:

Ու ելի մնաց Կարոն: Ամառը կարմիր բանակայինների հետ գնաց նրանց ճամբարը, ու այնտեղից գրեց իր առաջին նամակը ծնողներին.

«Միրելի հայր և մայր. յես արդեն գրեկարդալ գիտեմ. յեկող գարնանը կգամ գյուղ՝ ձեզ ոգնելու. ինձանից շատ բարև բուրջին. յես լավ եմ. — ձեր Կարո»:

7.

Վերջուպես հասավ Կարոյի գնալու օրը: Ո՛հ, ինչքան բան էր տանում նա հետը. մի փոքրիկ արկղ լիքը գրքերով, վորոնց մեջ կային այբբենարաններ ու պիտոներական գրքեր, հետո տանում էր սեպեր, գրիչներ, մատիտներ, թանաքամաններ՝ իր ընկերների համար: Բայց նա տանում էր և մի ուրիշ բան—գիտե՞ք ինչ—մի պիտոներական թմբուկ, վորը մի քանի անգամ փաթաթել էր թղթերի մեջ:

Նա նստեց Փուրգոնը ու գոգում դրեց թմբուկը, վոր դես ու դեն չդիպչի ու չպատովի: Փուրգոնը արագ էր գնում, բայց Կարոյին թվում էր, թե շատ դանդաղ է շարժվում ու անհամբերությունից վեր-վեր էր թռչում:

Յերեկոյան դեմ հանկարծ բլուրի վրայից յերևաց իրենց գյուղը. վորքան փոքր և հասարակ էյին թվում Կարոյին գյուղի տները: Մտնելուն պես, ինչպես և Վարդանի գալու ժամանակ, յերեխաներն սկսեցին կանչել վազելով. —

— Կարոն գա՛լիս ա, Կարոն գա՛լիս ա...

Ու լցվեցին Կարոյենց բակը: Բոլորը պըլ-

չած նայում էյին, ձեռքով տնտղում նրա շո-  
րերը, ու զարմանում, թե ի՞նչպես է փոքրիկ  
Կարոն կարմիր բանակայինի շորեր հագել:

Իրենց բակը մտնելիս առաջինը Կարոյին  
հանդիպեց Բողար շունը: Նա բարձր թռիչքնե-  
րով յեկավ առաջը, ուզում էր համբուրի:  
Մայրն ու առտը հազիվ կարողացան նրան  
հեռացնել, վորպեսզի իրենք փաթաթվեն ու  
համբուրեն Կարոյին:

— Վա՛յ եղ դո՞ւ յես, մեր չարաճճի Կա-  
րո՞ն, եղ ի՞նչ նախշուն տղա յես դառել, — ա-  
սում էր առտն ու համբուրում:

Կարոն ինքն իրեն փքվում էր, մի քիչ ել  
չարանում էր առտի վրա, թե ի՞նչու նա իրեն  
փոքրի տեղ է դնում, չարաճճի է ասում. չե՞  
վոր ինքը հիմա մեծ տղա յե դարձել...

Ամբողջ յերեկո Կարոյին հանդիստ չէյին  
տալիս. յեկան հայրը, հորյեղբայրը, բարե-  
կամները, իր ընկերները: Նա արդեն ցույց  
տվեց ընկերներին իր բերած բաները և պատ-  
վիրեց, վոր վաղը ժողով անեն:

8.

Հետևյալ որը Կարոն հավաքեց իր ընկեր-  
ներին ու մի պիտներական խումբ կազմեց: Նա  
կարդաց իր բերած գրությունները, բացա-  
տրեց, թե ի՞նչ է պիտները ու վերջն ասաց,  
վոր այս խումբը կպարապի, մինչև վոր կգա

հրահանգիչը և քննելուց հետո կհաստատի  
պիտներական կազմակերպությունը:

Այդ որվանից նա սկսեց իր պարապմունք-  
ները: Ինչե՞ր ասես չեր պատմում նրանց Կա-  
րոն. — այն բոլորը, ինչ վոր ինքն էր սովորել  
քաղաքում:

Իր բերած թմբուկը Կարոն հանձնեց Պետի-  
կին, վորը դը՛մփ-դը՛մփ խփելով հրավիրում  
էր պիտներներին ու հետո առաջն ընկած տա-  
նում նրանց: Միայն մի տարրինակ սովորու-  
թյուն ուներ Կարոն: Հենց վոր պարապմունք-  
ները վերջանում էյին, հանում էր ծոցից իր  
առաջին գզգզված այբբենարանը ու հարցնում  
ընկերներին:

— Ապա ասեք, ի՞նչ ա գրած ես գրքում:  
Ու բոլորը միասին ուրախ ասում էյին.

— ԿԱՐՄԻՐ ԿԱՐՈՆ ՃԱՌ Ե ԱՍՈՒՄ ԻՐԵՆՑ  
ԳՅՈՒՂՈՒՄ

36002 - 62



## ՊԻՈՆԵՐ ՍԱՐՈՆ

Փոքրիկ եր Սարոն, բայց շատ եր ուզում  
մեծ լինել: Դե ասեք, ի՞նչպես նա անհամբեր  
չլիներ.— իր մեծ յեղբայր Ռուբենը, մեկ էլ  
իրենց հարևանի տղա Շեկոն արգեն պիտոնե-  
էյին, իսկ ի՞նչը... մինչև յե՞րբ պիտի սպա-  
սեր, վոր մեծանա...

Վե՛րքան եր աշխատում Սարոն, վոր շուտ  
մեծանա,— առավտոր զարթնելուն պես մի լավ  
ձգվում եր անկողնում, վոր յերկարի, հետո  
շուտ-շուտ կախվում եր իրենց բակի թթենու  
ճյուղից, բայց ելի միշտ Ռուբենն ու Շեկոն  
ասում էյին— «դու դեռ փոքր ես, քո պիտոնե-  
րության ժամանակը չի:

Դե արի համբերի: Մանավանդ շատ եր  
բարկանում Սարոն, յերբ պիտոներների ժողո-  
վի որը գնում եր խրճիթ-ընթերցարանի պա-  
տուհանից նայում վոր տեսնի, թե ի՞նչ են  
անում ներսը: Ռուբենը միշտ նկատում եր ու  
ասում.

— Դու ետեղ ի՞նչ ես շինում. դու փոքր  
ես, գնա տուն, մայրիկի մոտ...

Բայց Սարոն չեր գնում, միայն մի քիչ

հեռանում եր, անցնում փողոցի մյուս կողմը,  
հետո նորից գալիս պատուհանի առաջ կանգ-  
նում: Ահա տեսնում եր՝ սենյակի անկյունում  
մի կարմիր շոր ձգած, նրա վերևն էլ Լենինի  
պատկերն եր: Հետո տեսնում եր սեղանի վրա  
յրազրներ, գրքեր: Մի քիչ հետո բոլորը հա-  
վաքվում էյին ու սկսում խոսել. ի՞նչ էյին  
խոսում՝ պատուհանից չեր լսվում: Յերբ  
պարծենկատ Շեկոն եր խոսում, Սարոն միշտ  
ասում եր ինքն իրեն,— սպասի՛ր, մի պիտոնե  
դառնամ, կտեսնես՝ քեզանից էլ, Ռուբենից էլ  
լավ կխոսեմ»...

Դե հիմա ասեք, ի՞նչպես չբարկանա Սա-  
րոն,— ինչու յեն իրեն միշտ փոքր ասում, չե՞  
վոր ինքն էլ Ռուբենի չափ գործ է շինում  
տանը, հիմա էլ մի ամիս է, ինչ գնում է  
ուսումնարան: Մի տեսե՛ք, ինչպես է սովո-  
րում:

Ի՞նչ անենք, թե Ռուբենից յերկու տարով  
փոքր է, բայց վոր քաջ է, են հաշիվ չի՞...

\*\*\*

Սարոն տուն յեկավ ուսումնարանից  
սխուր, հոնքերը կիտած: Առավտոր իր ընկեր  
Սուբենն ասաց, թե քաղաքից յեկել է պիտոներ-  
ների մեծը— հրահանգիչը ու պիտի խոսի ժո-  
ղովում: Ի՞նչպես կուզեր Սարոն ինքն էլ գը-  
նար, լսեր են քաղաքից յեկած տղային, բայց  
ի՞նչպես աներ...

Սարոյի մայրը նստած գուլպա եր գործում:

— Սարո ջան, ինչի՞ եզպես տխուր ես. ո՞վ ա քեզ չարացրել:

Սարոն լացակումած մոտեցավ մայրիկին:

— Բա ինչի՞ Ռուբենն ու Շեկոն ժողովի յեն գնում, իսկ ինձ չեն թողնում...

— Բան չկա, Սա՛րո ջան, դրա համար սիրտդ մի կտարիլ, ի՞նչ կա վոր,—կերթամ «պիոնների մեծերին կխնդրեմ, քեզ կընդունի: Ի՞նչի պետք է չընդունի, ումնի՞ց ա պակաս իմ Սարոն... ի՞նչ անեմ, թե մի քիչ փոքր ա, բա վոր պատիկ ու ճստիկ ա...

— Մայրիկ ջան, կերթա՞ս, կխնդրե՞ս, հա՞,—ասում եր Սարոն ու պինդ գրկում մայրիկին:

— Հա՛, բա՛, կերթամ կասեմ՝ ղոչաղ տղա ունեմ, տանու գործին հետևում ա, կովին, յեզներին մտիկ ա անում, ամեն բան կասեմ...

Սարոն ուրախ-ուրախ ղուրս յեկավ տանից. գնաց վերցրեց գոմի ավելը և պիոնների նման ուսին դրած սկսեց բախում յետ ու առաջ քայլել,— «մե՛կ-յերկու, մե՛կ-յերկու» ասելով, քայլում եր ու յերբեմն ել բարձր ձայնով կանչում.

— Մի՛շտ պատրաստ, մի՛շտ պատրաստ...

Բայց այդ ժամանակ Շեկոն ուսումնարանից գալիս նկատեց Սարոյին:



— Հը՞, ի՞նչ ես վազվզում, իբր թե պիտ-  
ներ ե՞ս. դու դեռ պատիկ ես, ի՞նչ քու բանն  
ա,— գնա հավեր արածացրու:

Ո՛ւՖ, Սարոն ինչպես բարկացավ:

— Հավերը դու արածացրու.— ասաց նա.—  
ա՞յ, կտեսնես, մայրիկը կգնա կինդրի «հրա-  
հանգչին», նա ինձ կընդունի:

— Չեն ընդունի:

— Ա՛յ թե չեն ընդունի,— ասաց Սարոն  
ու վրա վազեց, վոր բռնի Շեկոյին, իր ուժը  
ցույց տա:

Բայց Շեկոն իսկույն փախավ:

— Հը՞, եղպես կվախես,— ասաց նրա յե-  
տեվից Սարոն.— Մի սպա՛սիր, տես քեզանից  
վոնց եմ առաջ ընկնում...

Սարոն անհամբեր սպասում էր այդ որվա  
ժողովին: Դեռ ժամանակից առաջ նա գնաց  
կանգնեց խրճիթ-ընթերցարանի պատուհանի  
մոտ, տեսավ ներսը յերկու հոգի ելին, նրանք  
ել դուրս գնացին:

«Արի ներս մտնեմ,— մտածեց Սարոն.—  
ի՞նչ պետք է լինի...»

Ու կամաց-կամաց, կատվի քայլերով  
ներս մտավ, աջ ու ձախ նայելով: Մոտեցավ  
կարմիր անկյունին, տեսավ, վոր Լենինի  
պատկերի տակը դատարկ է ու կարմիր կտո-  
րով վարադույրի նման ծածկված:

«Ես ի՞նչ լավ թագնվելու տեղ ե, մտածեց  
Սարոն. արի մտնեմ պատկերի տակը, ոչով

չի իմանա, իսկ յես կլսեմ, ինչ վոր ժողովում  
կխոսեն...»

Ասե՛ն ու անելը մեկ յեղավ,— Սարոն  
մտավ տախտակի տակը ու թագնվեց վարա-  
դույրի յետեվը:

Մեկ-մեկու յետեվից սկսեցին հավաքվել  
պիտներները: Սարոյի սիրտը լեւջում էր— վա-  
խենում էր, վոր տղաները կգան յես կքաչեն  
վարադույրը ու կտեսնեն իրեն: Մեկ մտածեց  
դուրս դալ, բայց ի՞նչպես կարող էր, չե՞ վոր  
տղաները կծիծաղեյին վրան: չե՛, ավելի լավ  
է մեա մինչև վերջը»...

Ժողովն սկսվեց: Հանկարծակի լուսթյու-  
նից Սարոն իմացավ, վոր հրահանգիչը յեկավ:  
Շուտով գանգը տվին, մի յերկու խոսք ասաց  
Սիմակը, ու հետո սկսեց խոսել հրահանգիչը:  
Ի՞նչ լավ էր խոսում, քաղաքի յեզվով ու  
բարձր ձայնով:

Սկզբում Սարոն շփոթվելուց շատ քիչ բան  
էր հասկանում, բայց հետո, յերբ հանգստա-  
ցավ, սկսեց գլխի ընկնել ու մեծ ուշադրու-  
թյամբ լսում էր: Դա այն տեղն էր, յերբ հրա-  
հանգիչն ասում էր, թե պիտներները պիտի  
լավ ընկերներ լինեն, միասին աշխատեն, իրար  
հետ միացած լինեն:

Սարոն շատ հավանեց այդ խոսքերը, և  
ուզեց անպատճառ տեսնի հրահանգչի դեմքը:  
Ել համբերեց, կարմիր շորի ծայրը քիչ հեռ  
քաչեց ու նայեց արանքից, բայց հենց այդ

Ժամանակ մեկը կուացավ ու հարցրեց Սարոյին:

— Ես ո՞վ ե:

Սարոն ուզեց լուռ մնալ ու թագնովել նորից, բայց տղան նրա ձեռքից բռնեց ու դուրս բերավ: Բոլորն ուշադրությունը դարձրին կարմիր անկյունի կողմը ու սկսեցին ծիծաղել, տեսնելով Սարոյին: Հրահանգիչը, նկատելով Սարոյին, հարցրեց տղաներին, թե ի՞նչ է պատահել: Յերբ իմացավ, վոր Սարոն թաքնված է յեղել կարմիր անկյունում, նա մոտեցավ ու հետաքրքրությամբ նայում էր նրան:

Ոհ, Սարոն ի՞նչպես եր վախենում, ու ամաչում՝ կարմրել եր կարմիր բողկից ել ավելի:

Մի՛ վախենա, — ասաց հրահանգիչը. — բո անունն ի՞նչ է:

— Սա՛րո, — ցածր ձայնով պատասխանեց նա, փոքր ինչ սիրտ առնելով հրահանգչի մեղմ խոսքերից:

— Իսկ ազգանունդ ի՞նչ է:

— Չգիտեմ:

Բոլորը ծիծաղեցին:

— Ինչո՞ւ յես թաքնվել այտեղ:

— Ուզում եմ պիտներ դառնամ:

— Լա՛վ, յես կասեմ, վոր քեզ պիտներ դրեն. թեպես մի քիչ փոքր ես, բայց վո՛չինչ, կընդունենք քեզ: Դե՛, հիմա արի կողքի նստիր:

Սարոն նստեց հրահանգչի կողքին: Նրա աչքերը փայլում էին ու այտերը վառվում, կարծես կրակի մոտ էր նստած:

Ժողովը շարունակվեց, բայց Սարոն էլ չէր իմանում, թե ի՞նչ են խոսում. նա ուրախությունից մոռացել էր ամեն ինչ ու մտածում էր, թե ինչպես ինքը պիտներ կդառնա իրենց Ռուբենի ու Շեկոյի նման.

«Հըմ, Ռուբենն էլ, Շեկոն էլ այտեղ են ու իրեն են նայում... ելի կասե՞ք թե Սարոն փոքր է. հո իմացա՞ք ինչ ասաց հրահանգիչը»:

Ժողովը վերջանալուն պես Սարոն ծտի նման թռավ իրենց տուն ու ընկավ մոր գլուխը. այնպես պինդ փաթաթվեց, վոր նրա ձեռքից դուրպան վայր ընկավ:

— Մա՛յրիկ ջան, յես հիմի պիտներ եմ:

— Եդ ո՞վ ընդունեց քեզ:

— Ա՛յ են քաղաքից յեկած հրահանգիչը:

— Ա՛յ ապրես, — ասաց մայրը ու համբուրեց. — հիմի տեսնում եմ, վոր կարգին մեծ տղա յես: Բա եդ ի՞նչպես յեղավ, մի պատմիր:

Սարոն պատմեց ու ծիծաղեցրեց մայրիկին: Պատմելու ժամանակ յեկավ Ռուբենը:

— Ի՞նչ եյիր թագնովել, չես ամաչո՞ւմ. ասաց նա:

— Լավ, յերեխա յա, ասաց մայրիկը. —  
ուզում ա պիտոներ դառնա, ի՞նչ կա վոր.  
— Ի՞նչու ես բարկանում:

Սարոն պառկեց քնելու, բայց յերկար ժա-  
մանակ քունը չէր դալիս. շարունակ մտածում  
էր, թե ինչպես ինքը պիտոներների հետ կանց-  
նի փողոցով, ինչպես կերզի ու վարժու-  
թյուններ կանի...

\*\*\*

Վերջապես Սարոյին պիտոներ ընդունեցին:  
Գրողը Սիմակն էր, պիտոներների քարտուղարը:  
Ի՞նչէր ասես Սարոն չարավ այդ որն ուրախու-  
թյունից. մի քանի անգամ թուով իրենց ասն  
մոտով անցնող առվի վրայից, բարձրացավ  
ծառը, հետո ներքև իջավ, սկսեց խաղալ իր  
չան հետ, վեր յելավ իրենց տան կառուրը, յեմ  
եկի այսպես շատ բաներ...

Բայց գլխավորը չասացի՝ Սարոն վերջրեց  
իրենց գամի ցախավելը, պիտոների նման բռնեց  
ուսին ու քայլում էր բակում, շվշվացնում,  
յերգում, հաճախ կրկնելով.

— Սարոն — պիտո... մե՛կ-յերկու, մե՛կ-  
յերկու... մի՛շտ պատրաստ, մի՛շտ պատ-  
րաստ:

Փողոցի յերեխաները գալիս ելին, նա-  
յում Սարոյին ու բարկացնելու համար իրենք  
ել կրկնում ելին.

— Մե՛կ-յերկու... մի՛շտ պատրաստ...  
Սարոն մոտ էր վազում, փախցնում յե-  
րեխաներին, հետո նորից քայլում ու ասում.  
— Սարոն — պիտո... մե՛կ-յերկու...  
մի՛շտ պատրաստ... մի՛շտ պատրաստ...

## ՓՈՔՐԻԿ ՇԻՆԱՐԱՐՆԵՐ

### 1. ՄԵՐ ՀԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Վերջապես հասավ ամառվա արձակուրդի ուր: Այնպես ուրախ եյի, վոր ել պատմել չեմ կարող: Վերջին յերեք որը անհամբերությունից չեյի իմանում, ի՞նչ անեմ: Կարծես յերազում լինեյի. ինձ թվում եր, թե մեր գյուղումն եմ, անտառում, կամ արոտներում՝ սառն աղբյուրի մոտ, տավարի ու վոջխարի հետ:

Առավոտ եր. յերեք ընկերներս՝ յերեքս ել մի դպրոցից, յերկաթուղով ճանապարհ ընկանք դեպի մեր գյուղը: Գիտե՞ք մեր անունները, — յերեկ լսած կլինեք, — յես անկարգ Շեղոն եմ, ընկերներս ել՝ մեկը Զեկուցում — Յեղոն եր, մյուսը՝ Ծրագիր—Կարոն:

Ահա գնացքը պտտվեց բլրի շուրջը, մի լավ սուլեց ու կանգ առավ: Յես ուրախությունից ամեն ինչ մոռացած դուրս թռա, վորպեսզի տեսնեմ՝ կայարանն ելի առաջվա՞նն և մնացել, թե չե: Մեկ ել հանկարծ Կարոն հետևիցս կանչեց վագոնի պատուհանից:

— Շեղո, ի՞նչ անկարգ ես, իրեղեններդ թողել ես վագոնում, ինքդ դուրս յեկե՞ր:

Ու շտապ-շտապ ինձ հանձնեց կապոցն ու արկղը: Իրեղեններն առած գնացինք կայարան: Մեկ ել տեսնեմ՝ առաջս յեկավ մեծ յեղբայրս՝ Բենոն: Նա սայլով յեկել եր մեզ տանելու: Մի քիչ հանդստանալուց հետո նստեցինք սայլն ու յերգելով ճանապարհ ընկանք: Բենոն զգուշացնում եր, վոր չբղավենք, վորովհետև յեզները ջահել եյին, անփորձ, կարող եյին խրտնել: Բայց ո՞վ եր լսողը, այնպես եյինք հարայհրոց զցել, կարծես հարսանիքում լինեյինք: Մի տեղ ել, բլրից իջնելիս, Բենոն ննջել եր, իսկ մեր անասելի բղավոցը շարունակվում եր: Հանկարծ յեզները խրտնեցին ու ճանապարհից դուրս գալով,

սայլը շուռ տվին: Մենք թրմվացինք խոտերի վրա. լավ ե, վոր վնաս չեղավ. մի քիչ ցավ զգացինք, բայց իսկույն սկսեցինք ծիծաղել ու մոռացության տվինք: Իմ արկղը բացվել եր ու միջից վայր եր ընկել իմ ոտներենի դասագիրքը, ու մեկ ել սպիտակեղենը: Կարոնն ել ծրագիրներն եյին թափվել:

Մի կերպ սայլը շուռ տվինք, տեղը դրինք ու շարունակեցինք մեր ճանապարհը:

— Շատ չար տղերք եք, — ասում եր Բենոն. իսկը կապովի գժեր եք:

Կապովի գժե՞ր... եդ յես չեմ, եդ դու

յես, ասում էյինք ընկերներս միմյանց ու  
երար ուսի խփում:

Մեկ էլ տեսնենք Չեկուցում—Յեղոն հանել  
է թուղթը ու ինչ վոր գրում է, չնայած վոր  
սայլը անասելի ցնցում էր:

— Եղ ի՞նչ էս գրում, Յեղո, հարցրի  
նրան:

— Չեկուցում եմ գրում սայլը շուս գալու  
մասին:

— Ի՞նչպես թե գեկուցում, ում պիտի գե-  
կուցես: Ենդուր են անունդ գրել Չեկուցում—  
Յեղո ե՛: Ու յերկուսով՝ յես ու Կարոն՝ սկսե-  
ցինք ծիծաղել: Յեղոն ամաչելուց պահեց  
թուղթն ու մատիար:

... Ահա և մեր գյուղը. հեռվից յերեվում  
էյին յեկեղեցու ծուռ դմբեթը, երար վրա  
թափված տները, փոքրիկ գետը, այգիները:

Սայլը դես կանգ առավ Կարոյենց տան  
առաջ. հետո Յեղոյենց, իսկ մեր տունը գյու-  
ղի մյուս ծայրին էր:

Դեռ տուն չհասած, իջա սայլից, վազեցի,  
մտա մեր գավիթը: Փոքրիկ քույրս՝ Սաթիկը  
իր ընկերուհիների հետ խաղում էր: Ինձ վոր  
տեսավ, ամեն ինչ թողեց ու վազեց տուն,  
կանչելով:

— Շեղոն յե՛կել ա...

Տանից դուրս յեկավ մայրս, ձեռքերը  
խմորոտ, ու փաթաթվեց վզիս, համբուրեց:  
Մեր մեծ նանը նստած էր դռան մոտ, գծրգի

կտորի վրա: Երա աչքերն ու ականջները թու-  
լացել էյին. կանչների մոտը, բայց չճանաչեց  
ինձ:

— Նանի, չե՞ս ճանաչում, — հարցրի.

— Եղ ս՞ում աղեն ես, — թույլ ձայնով,  
կարծես հորի խորքից հարցրեց նանը:

— Շեղոն եմ, Շեղոն, — ասացի բարձր  
ձայնով, ու դեմքս մտակցրի նրան:


— Վա՛յ, Շեղոն ե՞ս. ա՛յ ապրես, դորա-  
նաս:

Նանը դրիկեց ինձ ու յերկու թուշս համ-  
բեց:

Շուտով այդուց յեկան՝ հայրս, հորյեղ-  
րայրս, մորաքույրս. բոլորն էլ ուրախ էյին,  
իսկ մայրս աչքերը չեր հեռացնում ինձանից:  
Փոքրիկ յեղրայրս խնդրեց, վոր իմ գրքերը  
ցույց տամ նրան: Յես էլ ցույց տվի ու բացա-  
տրեցի նրան միջի պատկերները:

## 2. ԿԱՄՈՒՐՁ ԵՆՔ ԾԻՆՈՒՄ

Մի շարաթ էր գյուղումն էյի: Ուզնում  
էյի մեր տան գործերում, գնում էյի հանդը,  
այգին: Բայց այդ ի՞նչ էր վոր... յես ուզում  
էյի ուրիշ, մեծ գործեր անել. մտածում էյի  
ջրանցքների, էյեկարոկայանների, կամուրջ-  
ների մասին: Անցյալ օրը հանդը գնալիս, ան-  
սավոր մեր գետի վրա կամուրջ չկա, գյուղա-  
ցիք մեծ քարերի վրայով են անցնում: Մտա-



ծեցի՝ ա՛յ լավ բան—հենց այստեղ կարելի  
յե կամուրջ շինել:

Տուն գնալիս ել, յերբ անցնում եյի մեր  
Լենինյան հրապարակով, տեսնեմ՝ նրա կողքի  
նեղ փողոցի անկյունում չորս հատ գերան ե  
գարած: Պատահեցի գյուղխորհրդի թղթա-  
տար Ալօյին:

— Ալօ, ես գերաններն ո՞ւմն են:

— Ո՞վ ա իմանում, վաղուց ա ետեղ  
դրած են:

«Ուրեմն, —ասացի ինքս ինձ, — կամուր-  
ջը պատրաստ ե» — ու առանց յերկար մտածելու  
վազեցի Կարոյի մոտ:

— Կարո, տանն ե՞ս, — կանչեցի բարձր  
ձայնով:

— Հա, տանն եմ, ա՛րի. հը՛, Շեղո, ի՞նչ  
կա:

— Դեռ մի ասա, ի՞նչ ես շինում:

— Մածուն եմ ուտում. նոր եմ յեկել  
գործից:

— Ի՞նչ մածուն ուտելու ժամանակ ե.  
պե՞տք ե մի բան անենք, թե չե...

— Որինակ ի՞նչ...

— Ա՛յ ուրիշ տեղեր ջրանցքներ, հիդրո-  
կայաններ, կամուրջներ են կառուցում, իսկ  
մենք ի՞նչ ենք անում:

— Լա՛վ, արի, մածուն կեր, հետո ծրա-  
դիր կկազմենք:

— Դու ել հենց քո ծրագիրն ես քչում.

իսկը վոր Յրազիր—Կարո՞ յես. չպրծա՞ր, ամբողջ տարին ծրագրներ եյիր կազմում: Յես ասում եմ ուղղակի հենց գործի անցնենք...

— Դու ելի անկարգ Շեղոն ես մնացել. հենց այնպես ուզում ես սկսե՞նք...

— Հա՛, հենց ուղղակի, վազեվազ, իմացա՞ր. դե, վեր կաց, գնանք:

Ել չթողեցի, վոր Կարոն ձայն հանի, ձեռքից բռնեցի ու դուրս տարա. խեղճի մածունը կիսատ մնաց:

Համարյա վազելով գնացինք Յեղոյի մոտ: Նա նստած եր իրենց սրահում և իր փոքրիկ յեղբոր համար սայլակ եր շինում:

— Յեղո, ի՞նչ բանի յես,— կանչեցի բարձր ձայնով:

— Յերեխի համար սայլակ եմ շինում:

— Դու յել ժամանակ ես վատնում յերեխայական բաների վրա. չե՞ վոր շինարարական աշխատանքներ պիտի սկսենք:

— Դեռ մի յեկեք զեկուցեք, քննենք, հետո դիմենք գործի:

— Ի՞նչ զեկուցում, ի՞նչ բան,— ասացի, — դպրոցում ել դլուխներս տարար քո զեկուցումներով. շո՛ւտ արա, վե՛ր կաց, այստեղ գործի մասին ենք մտածում, իսկ դու զեկո՛ւցում...

— Ի՞նչ ե պատահել, մի ասեք տեսնեմ:

— Հետո կիմանաս. արի գնանք.

Յեղոյին ել քարշ տվի, հետս տարա: Յե-

րեքով գնացինք նախ գետափը, նայեցինք կամուրջի տեղը: Անպիտան Յեղոն սուս ու փուս նայում եր գետին ու խորամանկ ժրպտով աչքը բաց ու խուփ անում.— յերեվի մտածում եր, թե ի՞նչպես պիտի շինենք կամուրջը:

Հետս տարա, ցույց տվի գերանները:

— Շե՛ղո, ես գերանները վոր չաա՞ն,— կասկածեց Կարոն:

— Յե՛ս քեզ ասում եմ, ժամանակ մի՛ք կորցնի. Յեղո, դու յերկրաչափություն լավ ես իմանում, դու կլինես ինժեները, դե չնորքը ցո՛ւյց տուր:

Յեղոն ուրախացավ, վոր իրեն ինժեներ անվանեցի:

— Լա՛վ, կչափեմ գերանների յերկարությունը, հետո գետի լայնությունը, հետո կզեկուց...

— Սո՛ւս...— ասացի յես,— ձեռքովս ծածկելով նրա բերանը: Գո՛րծ, գո՛րծ, իմա՞ցար, իսկ զեկուցը պահիր...

— Դե պետք ե մի մետր ճարենք չափելու համար, և մի պարան:

Գնացինք կոոպերատիվ: Յեղոն մի ձույ ճարեց ու կոոպերատիվի մետրը վրան դնելով նշաններ արեց.

— Կա՛րո, դուք պարան ունե՞ք:

— Ունենք:

— Դե վա՛ղիր, բե՛ր, շուտ անենք, վեր-

Չացնենք, վոր վաղն առավոտից սկսենք կամուրջի կառուցումը:

Կարոն վազեց իրենց տուն ու շուտով վերադարձավ պարանը ձեռքին: Յեղոն առաջ մետրով չափեց պարանի յերկարությունը, հետո պարանն ու մետրը հետներս առած, գնացինք նորից գետափը: Յեղոն սկսեց իր ինժեներությունը. պարանի մի ծայրը ավեց Կարոյին և ուղարկեց մյուս փըր, իսկ յես մնացի այս կողմը: Հետո, սկսեց մեզ չարչարել՝ ե'սպես կանգնեցեք, պարանը լա'վ ձգեցեք, ափերին ուղղահա'յաց բռնեցեք,—մենք ել նրա հրամանները կատարում էյինք: Վերջապես Յեղոն հայտնեց ինժեների լրջությամբ, վոր գերանները լավ կզան:

— Դե մի քիչ շուտ ասեյիր, ի՞նչ կլիներ, — վրա պրծա յես:

— Ե՛հ, դու ել մի գլուխ շտապում ես. չե՞ վոր յերկու անգամ պիտի չափենք, վորպեսզի չսխալվենք:

— Կեցցես, — ասացի յես, ուրեմն վաղն սկսում ենք...

\*\*\*

Առավոտը վաղ վեր կացա, վերցրի Յեղոյին ու Կարոյին: Յերեքով ընկանք գյուղի փողոցները, դռնե-դուռ ման էյինք գալիս ու դուրս կանչում մեր ընկերներին ու հետներս տանում դեպի Լենինյան հրապարակը:

Շուտով բարձրացավ հրապարակում պիտ-

ներական դրոշակը. թմբուկի դմբումբոցը մի կէս ժամում հավաքեց մի ահագին խումբ:

Մեր բաղդից այդ որը գյուղի համարյա բոլոր տղամարդիկ բացակա էյին. նրանք գնացել էյին շրջանի կենտրոնը ինչ-վոր հողային վեճի քննության: Թե չե կարող էյին խանգարել մեզ, — թե ի՞նչով՝ հետո կիմանաք...

Կարոն թուղթը ձեռքին ինչ-վոր գրում էր, իսկ Յեղոն հավաքում էր բահեր, քլունգներ, պարաններ:

Կարոն վերջապես թուղթը գրեց գրպանն ու առաջարկեց ինձ ժողովը բանալ: Յես այնքան էյի շփոթվում, վոր չգիտեյի ի՞նչ ասեմ: Բայց վերջապես սկսեցի:

— Ընկերներ, այսոր մենք սկսում ենք շինարար աշխատանքները. մեր առաջին գործն է լինելու կամուրջ շինելը. հենց կհասնենք գետափը, անմիջապես կանցնենք գործի: Ընկեր Յեղոն ցույց կտա, թե ո'վ ի՞նչ աշխատանք է կատարելու: Կեցցե՛ մեր շինարարությունը...

— Կեցցե՛, — թնդացին տղաները այնպիսի զիլ ձայնով, վոր ականջներս խրայրին:

Յես նայեցի տեսնեմ, Յեղոն ու Կարոն սուս ու փուս իրենց գործն էյին տեսնում: Յեղոն յերկու լուծ յեղներ էր ճարել, գերանները կապում էր ծայրից, իսկ Կարոն կարգով չարք-չարք կանգնեցնում էր տղաներին:

Յես շարունակ շտապեցնում էյի ու անհամբեր սպասում այն բոպեյին, յերբ հրաման կտամ ու բոլորը կշարժվեն:

վերջապես յեկավ այդ բոսպեն. յես կարմիր հրամանատարի նման բարձր ձայնով գոչեցի— «Հա՛ռաջ...» ու շարքերը ձգվեցին գյուղի գլխավոր փողոցով:

Ո՛հ, ի՛նչ աղմուկ, ինչ իրարանցում եր փողոցներում: Գյուղի յերեխաները շրջապատել էին մեզ, թռչկոտում էին, ժվժվում, իսկ կանայք դուրս էին յեկել թամաշա:

Գետափը հասնելուն պես՝ յերկու մասի բաժանվեցինք ու շարվեցինք յերկու ափերին: Ի՛նչ չարչարանքով, ի՛նչ հարահրոցով գերանները հասցրինք մյուս ափը, հետո պարանոներով այս ու այն կողմը քաշելով, կանոնավոր դիրք տվինք նրանց:

Հենց վոր գերանները մի կերպ շարեցինք, յես ել չհամբերեցի, վազեցի կամուրջով, վորպեսզի առաջին անգամ յես անցնեմ, բայց գերանը վոտներիս տակ շարժվեց և յես ընկա ջրի մեջ ու մի լավ թրջվեցի:

Ի՛նչ ծիծաղ եր. աջ ու ձախ ափերից այնպես համով էին քրքջում, վոր իմ ծիծաղս ել յեկավ.— «ա՛յ քեզ խայտառակություն», մտածում էյի յես, «չինարարության հերոս Շեղոն ընկնի ջո՛ւրը... վա՛յ ամո՛թ, ամո՛թ»...

Յեղոն շարունակ նայում եր կամուրջին, ստուգում նրա ուղղությունը, ու շտկում. հետո յերբ արդեն դիրքը վորոշեց, քլունգներով փորել տվեց, վոր գերանների ծայրերը ամուր նստեն գետնին:

Յերբ կամուրջն արդեն պատրաստ եր, Յեղոն բարձրացրեց դրոշակը մյուս ափից, իսկ Կարոն շարքերով կանգնեցրեց տղաներին:

Ապա յես վերցրի մի դրոշակ, իսկ մյուս կողմից Յեղոն իր դրոշակով յեկանք հանդիպեցինք կամուրջի մեջ տեղն ու իրար ձեռք սեղմեցինք:

— Կեցցե՛ մեր կամուրջը, թնդացին յերկու ափից:

Ու սկսեցինք յերգել Ինտերնացիոնալը: Յերբե՛ք, յերբե՛ք, յես այդպես ուրախ չեմ յեղել, ինչպես այդ բոսպեյին:

Մենք յերգելով վերադարձանք գյուղը ու հասնելով Լենինյան հրապարակը՝ ցրվեցինք:

### 3. ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՆՔ ՍՏԱՆՈՒՄ

Մյուս առավոտ գյուղխորհրդի կատարածուն յեկավ մեր տուն:

— Նախագահը քեզ կանչում ա,—ասաց նա:

— Ինչի՞ համար:

— Չգիտեմ:

Գնացի գյուղխորհրդի գրասենյակ, տեսնեմ— Յեղոն ու Կարոն ել կանգնած սպասում են: Նրանք ել չգիտեյին, թե ի՞նչի համար էյին կանչել ու ինձ նման զարմանում էյին:

Յերբ մեզ ներս կանչեցին, նախագահը դեմքը խոժոռած նայեց մեզ:

— Դուք եք գերանները տարե՞լ, — Հարցրեց:

— Այո՛, մենք:

— Ձեզ ո՞վ է իրավունք տվել:

Բոլորս կարմրեցինք, իսկ ամենից շատ՝ յես:

— Ուրեմն դուք տարել եք առանց թույլտվության, իսկ այդ գերանները պատկանում էյին մեր գյուղին, և դուք պիտի իրավունք խնդրեյիք գյուղխորհրդից: Ճի՞շտ է թե չե:

Մենք ավելի կարմրեցինք:

— Հը՞, ի՞նչու եք լռում. ուրեմն զգում եք, վոր մեղավոր եք, և պիտի պատասխանատվության յենթարկվեք... բայց իհարկե, յես գիտեմ, վոր ձեր նպատակը լավ է յեղել, շատ ուրախ եմ, վոր դուք այդպես ձգտում եք շինարարության, հենց այդ պատճառով ել ձեզ ներում եմ, միայն դուք պիտի մի գրություն ներկայացնեք և թույլտվություն խնդրեք ոգտագործելու գերանները կամուրջի համար, այսինքն անեք այն, ինչ վոր պիտի անեյիք գործի սկզբին:

Իմացա՞ք, դե հիմա գնացեք, դուք ազատ եք:

Դուրս յեկանք փողոց կարմրած, չփոթված:

— Հիմի Շեղո, տեսնում ե՞ս, վոր անկարգ, շտապ գործ բռնելը լավ չի, — ասաց կարոն:

— Յես ել եզ էյի ուզում ասել, ավելացրեց Յեղոն:

— Ճիշտ է, ճիշտ, ընկերներ, — ասացի, — սրանից հետո առանց խորհրդակցության, առանց քննության ել վոչ մի գործ չենք բռնիլ: Յես եմ մեղավոր... դե, կարո, մի լավ հայտարարություն կգրես գյուղխորհրդի նախագահին...

#### 4. ՅԵՐՔՍ ԵՈՍՔ ԵՆՔ ՏԱԼԻՍ ՄԻՇՏ ՄԻԱՍԻՆ ԳՈՐԾԵԼՈՒ

Մի շաբաթ եր անցել այդ որից, յերբ քաղաքից յեկավ պիտներների հրահանգիչը:

Դեռ մինչև ժողով անելը նա յեկավ մոտս, հարց ու փորձ արեց, թե ի՞նչով ենք զբաղվել վերջին ամիսը: Յերբ յես պատմեցի, թե կամուրջ ենք շինել, նա շատ հետաքրքրվեց, խնդրեց մանրամասն գեկուցել ժողովում, թե ի՞նչպես ենք կազմակերպել և այլն...

— Ա՛յ քեզ դրություն. հիմա ի՞նչ պիտի անեմ, ի՞նչպես պիտի դուրս գամ այս դժվարությունից: Տխուր գնացի Յեղոյի մոտ, պատմեցի, թե մեզանից հաշվեավություն են պահանջում...

— Մի՛ վախիլ, Շեղո, ամեն ինչ պատ-

րաստ ե—մանրամասն կազմել եմ հաշիվը, թե  
քանի մարդ ե մասնակցել ու աշխատել, շի-  
նանյութերի արժեքն եմ նշանակել, աշխա-  
տանքինը նույնպես, և մինչև անգամ նկա-  
րել եմ կամուրջը ու նրա չափսերը գրել...

— Ա՛յ խորամանկ, դու եղ յե՞րբ ես արել:

— Քեզանից թաղուն եմ արել:

— Ենդուր էյիր թուղթը մեկ-մեկ հա-  
նում, ինչ վոր բաներ գրում:

— Համարյա թե...

— Ո՛հ, Յեղո, ինձ լա՛վ փրկեցիր. ո՞վ  
գիտի, ծրագիր ել ես կազմել:

— Չե՛, ծրագիրը կազմել ե Ծրագիր—կա-  
րոն, նա ել ե պատրաստ:

— Ա՛յ քեզ հրաշք... ուրեմն քե՛ֆ ենք  
անում, դե վե՛ր կաց, գնանք Կարոյի մոտ:

Գնացինք Կարոյի մոտ: Տեսնելուն պես  
յես ասացի կատակով:

— Չարմանալի տղա յես, Կարո, կամուրջ  
ես շինում, առանց ծրագրի, առանց նախա-  
գծի...

— Ա՛յ դու անկարգ Շեղո, հիմա՞ յես  
ասում հա՞. բա ի՛նչպես էյիր շտապեցնում,  
ձեռքիցս քաշում...

— Լա՛վ, լա՛վ, հա՛նիր ծրագրիդ:

Յերեկոյան ժողովին իմ տեղը մանրա-  
մասն զեկուցեց Կարոն: Յերեվում եր, հրա-  
հանգիչը շատ դո՛հ մնաց:

Յերբ դուրս յեկանք ժողովից, յես գրկե-  
ցի Յեղոյին ու Կարոյին ու ասացի:

— Ընկերնե՛ր, յես խոսք եմ տալիս, վոր  
սրանից հետո ել անկարգ, շտապ գործեր չեմ  
բռնելու, ել առանց ծրագրի, վոչ մի շինարար  
աշխատանք չեմ անելու...

— Իսկ յես,—ասաց Կարոն, առաջարկում  
եմ մեր Շեղոյին ել անկարգ «Շեղո» չասենք,  
այլ անունը դնենք՝ «Կրակոտ—Շեղո» համա-  
ձայն ե՞ս:

— Համաձայն եմ:

— Դե ձեռք-ձեռքի տանք,— շարունակեց  
Կարոն, խոստանանք միշտ միասին գործել՝  
Կրակոտ—Շեղոն, Ծրագիր—Կարոն ու Չեկու-  
ցում—Յեղոն...

Կեցցե՛ մեր յեռյակը...

## ՀԵՐՈՍ ԿԱՐԵՆԸ

Ամեն անգամ, յերբ քեռիս տանը չի լինում, սուս ու փուս ներս եմ մտնում նրա սենյակը, դուռը կամաց հետ դնում, ապա մոտենում եմ նրա «հեղափոխական» շորերին. մի հաստ, ծանր, զինվորական վերարկուս յե, մի պիպոզ գլխարկ ու յերկար ճակերով կոշիկներ:

Դեռ սկզբում մի լավ տնտղում եմ շորերը, հետո սկսում եմ հագնել: Վոր տեսնեք ինձ այդ շորերով, կծիծաղեք. գլխարկը հասնում է մինչև ուտերս. թեք եմ դնում, վորպեսզի յերեսս չծածկի. ամբողջ վտաններս թաղվում են կոշիկների մեջ. իսկ վերարկվի մեծ մասը պոչի նման քաչ է դալիս յետևիցս: Ուղղակի ծիծաղ է, բայց յես շատ լուրջ եմ հագնվում:

Վերջացնելուց հետո գրպանիցս հանում եմ թղթում փաթաթած այրած խցանն ու բեխեր եմ շինում... Հիմա արդեն յես իսկական մեծ եմ... կանգնում եմ հայելու առաջ ու մտածում, թե ինչե՛ր կանեմ յես, յեթե մեծ լինեմ. իհարկե՛ կարմիր բանակային հրամանատար կլինեմ; ինչպես իմ քեռին է: Նա շատ կռիվների յե մասնակցել. ի՞նչպես են ասում

եզ կռիվներին— հա՛, քաղաքայիական կռիվներ... յես էլ հենց դրանից կսկսեմ:

Կնստեմ ձիու վրա, կառնեմ հետս հեծելազորն ու կգնամ շա՛տ հեռու, կհասնեմ Մոսկվա... ո՛հ, ի՛նչ մեծ քաղաք է... այնտեղ է մեր մեծ ուսուցիչ և հեղափոխության հրամանատար Լենինը... Նա կանգնած է մի բարձր տեղ ու խոսում է բանվորների առաջ:

Հանկարծ նա նկատում է մեր հեծելազորը, նկատում է ինձ:

— Ընկե՛ր Կարեն, — ասում է ընկեր Լենինը, — յեկել ես Հոկտեմբերյան հեղափոխությանն ոգնելո՞ւ, ա՛յ, ապրես, լա՛վ ես արել: Դե՛, այդ զորքը տա՛ր դեպի հարավային ճակատը, մաքրիր յերկիրը հակահեղափոխական թշնամիներից:

— Մի՛շտ պատրա՛ստ, — ասում եմ յես ու ձիս դարձնելով դեպի զորքերը՝ հրամայում եմ.

— Ընկերնե՛ր, դեպի հարավային ճակատը..

Ձե՛, մոռացա, այնտեղ դեռ մի ճառ եմ ասում, բացատրում եմ, թե ինչո՞ւ համար ենք կռվում, ի՞նչ է Հոկտեմբերյան հեղափոխությունը և ո՞վքեր են մեր թշնամիները:

Հետո շարժվում ենք առաջ. զնում ենք այնպես արագ, կարծես թռչում ենք: Այդպես դալիս ենք, վրա տալիս թշնամուն, փախցնում դեպի անտառները: Հանկարծ կարմիր բանա-



կայիններից մեկը նամակ է տալիս ինձ. բաց եմ անում, տեսնում՝ ջեռուցս է:

«Կարե՛ն,—գրում է ջեռիս—յես գերի յեմ ընկել թշնամու ձեռը. գտնվում եմ գետի այն կողմը. հասի՛ր քո ընկերներով և ազատի՛ր ինձ...»

Յես իսկույն քաջ տղաներից ընտրում եմ հիսուն հողի. մենք ըջում ենք ձիերը, անցնում գետի այն կողմը. հարձակվում ենք թշնամու վրա և ազատում ջեռուս:

— Գեռի՛, ի՞նչպես իմացար, վոր կովի դաշտումն եմ,—հարցնում եմ յես:

— Յերբ մեր վաշտը գերի յեր ընկել, հանկարծ դու յերեվացիր մի խումբ ձիավորների հետ, ուզում եյիր չըջապատել թշնամուն, բայց միայն գերիների կեսն ազատեցիր. յես այդ ժամանակ տեսա քո դեմքը, ասի՛ ես հո մեր կարենն է...

Հետո յես ու ջեռիս զորքի գլուխ անցած՝ նորից սկսում ենք պատերազմը հակահեղափոխականների դեմ: Փայլուն հաղթանակներ ենք տանում, բայց մի կովում յես գերի յեմ ընկնում... ինձ տանում են, վորպեսզի մի մութ նկուղում փակեն, բայց յես փախչում եմ և ընկնում մի խիտ անտառ: Բարձրանում եմ բլրի գլուխն, ու այնտեղ մի բաց տեղ խարույկ վառում: Մերոնք նկատում են կրակն ու գալիս են, ինձ ազատում... Ո՛հ, ի՞նչպես եմ

Համբուրվում ընկերներին հետ, ի՞նչպես եմ պատմում իմ գերության մասին...

Հետո թշնամուն հաղթելով՝ նրանց զորքի մի մասը գերի յենք վերցնում, իսկ մյուսը փախցնում ենք, զրում: Յես ամբողջ բանակով զնում եմ ընկեր Լենինի մոտ:

Նորից տեսնում եմ՝ ընկեր Լենինը կանգնած է մի բարձր տեղ ու ճառ է ասում, իսկ նրա առաջ հավաքված են շա՛տ, շա՛տ բանվորներ իրենց կարմիր գրոշակներով:

Ընկեր Լենինը նկատում է մեզ ու ասում:

— Մեր քաջ կարմիր բանակայինները մեծ հաղթությունից հետո յեկել են մեզ մոտ. կեցցե՛ մեր կարմիր բանակը...

Քոլորը հանկարծ բղավում են:

— Կեցցե՛...

— Թող հրամանատար ընկեր Կարենը բարձրանա վերև, — ասում է ընկեր Լենինը:

Յես բարձրանում եմ վերեւ, ընկեր Լենինի մոտ. ո՛հ, ամաչում եմ, կարմրում. մտածում եմ՝ ի՞նչ պիտի ասի նա. յերեվի նկատողություն պետք է անի... բայց ընկեր Լենինը համբուրում է ճակատս ու ասում:

— Ընկե՛ր Կարեն, խոսի՛ր բանվորներին առաջ, պատմիր, թե ինչպես հաղթեցիր թըշնամիներին...

Բայց յես ամաչելուց չեմ կարողանում խոսել. կարմրում եմ ու գլուխս կախ նայում գետնին:

Հետս Լենինը մոտենում է ինձ, ձեռքը զնում ուսիս ու ասում ժպտալով.

— Ընկե՛ր Կարեն, յես կարծում եյի մեծացել ես, բայց դեռ փոքր ես... Վոչի՛նչ, կմեծանաս, հետո կխոսես...

Յես ափելի յեմ ամաչում, ել վոչի՛նչ չեմ տեսնում, կասես՝ աչքերս մթնում են...

\*\*\*

... Հանկարծ զգում եմ, վոր մեկը հետեւիցս յերկու ձեռքով ծածկել է աչքերս: Նկատում եմ, վոր մեծ մարդու ձեռքեր են: Նոր միայն հիշում եմ, վոր հայելու առաջն եմ կանգնած և յես փոքրիկ Կարենն եմ:

— Հայրիկն է, — ասում եմ:

Բայց բռնողը լուռ է:

— Քեոխ է:

— Հա՛, յես եմ, — ասում է քեոխ ծիծաղելով, — ա՛յ անպիտան, ելի՞ հազար իմ զինվորական շորերը. վերջը, ինչպես յերեվում է, կարմիր բանակային պիտի դառնաս...

— Գիտե՞ս, քեոխ՛, ասացի յես, — հիմա ի՞նչպիտի լավ բաներ եյի յերեվակայում... Քեոխ, Լենինի մոտ եյի զնացել... ա՛խ, յեթե յես մեծ լինեյի՛...

— Ի՞նչ կա վոր, լավ կսովորես, լավ կախատես, շուտով կմեծանաս...

— Գիտե՞ս, քեռի՛, քեզ գերությունից  
ազատեցի...

— Ո՛հո՛, այդքան քա՞ջն ես յեղել. դե  
վոր այդքան շտապում ես մեծ լինել, արի քո  
պատկերը հանենք այս շորերով:

Ու քեռիս բերեց իր լուսանկարչական  
գործիքը և պատկերս հանեց: Յերբ պատկե-  
րը պատրաստ եր, նա գրեց տակը. — «նվեր  
Հերոս Կարենին՝ սոցիալիստական հայրենի-  
քի սպառազանց հարմիր հրամանատարին»:

### ԱՅ ԹԵ ԹՐՄՓԱՅ...

Գյուղի բատրակների ժողովն եր: Յերկար  
սեղանի մոտ նստել եր բատրակ Սաքոն, գլու-  
խը փալասներով կապկպած: Նրա կողքին  
քարտուղար Տիգոն եր: Նա հարցեր եր տալիս  
Սաքոյին ու գրում: Սաքոն պատմում եր, թե  
ինչպես նրան ծեծեց կուլակ Հանեսը, վորի  
մոտ նա ծառայում եր: Բոլոր տղաները բար-  
կացած խոսում էյին այդ ծեծի մասին:

— Ես ի՞նչ խայտառակություն ե,—ասում  
եր Հարոն,— քեզ ել հասա՞վ անխճած Հանեսի  
ձեռը...

— Տղե՛րք, բա մենք մեռած ե՞նք, վոր ո՞րը  
ցերեկով եսպես ծեծեն մեր ընկերոջը. —ասաց  
Պետրոսը:

— Մենք ել եղ ենք ասում,—վրա բերին  
մյուսները,—պետք ե եղ ավազակ Հանեսին մի  
լավ պատիժ տանք:

Հարոն մոտեցավ Սաքոյին, մի լավ դիտեց  
նրա գլխի վերքերն ու ասաց.

— Ելի լավ ե, աչքին չի դիպել. թե չե  
անիրավ Հանեսն աչք-ունք չի հարցնում:

Հիմա քո գործը դատարան կտանք, Հանեսի  
ճաշը լավ կեփենք: Բայց յես կուղեցի, վոր  
նրա գլխին մի ենպիսի պատիժ գար, ինչ-  
պես մի անգամ պատահեց...

— Եղ յե՞րբ եր, — հարցրին ամեն կողմից:

— Պատերազմի տարին եր, առաց Հա-  
րոն, — յես են ժամանակ տասնուհինգ տարե-  
կան եյի և բատրակ եյի եղ Հանեսի մոտ:  
Շատ եյի աշխատում, ինչ ասում եր, գլուխս  
քաշ կատարում եյի: Բայց ինչ անեյի, չանեյի՝  
միշտ Հանեսի հայհոյանքն ու ծեծն անպակաս  
եր լինում:

Ամեն անգամ ծեծից հետո զնում եյի մորս  
մոտ, ինչպես մի ծանր հիվանդ: Նա ել լաց ու  
կոծ եր անում, բայց յերբ հանդարտվում եր,  
ելի իր հին խրատն եր տալիս՝ վոր ելի խո-  
նարհ ծառայեմ Հանեսին: Նա վախենում եր  
Հանեսից: Դե ի՞նչպես չվախենար. են ժամա-  
նակ ամբողջ գյուղը Հանեսի ձեռքին եր: Նա  
ամենից հարուստն եր: շատերը նրան փող  
եյին պարտ, իսկ ցարական իշխանավոր մար-  
դիկ ել միշտ նրա տանն եյին իջնում, ու-  
տում-խմում ու Հանեսին ամեն տեղ պաշա-  
պանում:

Ուղիղն ասած՝ ավելի լավ եր մարդ քաղ-  
ցած մնար, քան թե ծառայեր եղ անիծած Հա-  
նեսի տանը, բայց ի՞նչ արած, մորս խաթեր  
մնում եյի:

Մի որ ել եղպես Հանեսն ինձ ծեծեց. հետո

գլուխս ես մեր Սաքոյի պես կապկպած գնացի  
մորս մոտ: Ելի լաց յեղավ ու վերջն սկսեց իր  
խրատները: Բայց ես անգամ համբերությունս  
արդեն հատել եր: Մորս ասի՝ — մայրիկ, ել  
չեմ ծառայելու Հանեսի մոտ:

— Վո՞նց թե չես ծառայելու, — սարսա-  
փած ասաց նա, ծնկներին խփելով:

— Ել չեմ ուզում մնալ եղ գազանի մոտ:

Մայրս ինչքան աղաչեց, չլսեցի. վեր կացա  
յերեկոյան գնացի Հանեսի տուն՝ վարձս ստա-  
նալու: Տեսա՝ նա թիկնել եր թախտին ու արջի  
նման մրթմրթում եր տանեցիների վրա: Ինձ  
վոր տեսավ՝ վեր թռավ:

— Ետեղ ի՞նչ ես չինում, — ա՛յ փուչ ան-  
պիտան, — բղավեց նա. — գնա ընի՛ր, եզուց ծե-  
զին պետք է հանդը գնաս:

— Վարձս տուր, ել չեմ ուզում ծառայել,  
— ասացի:

— Ըհը՛, յես քեզ հիմի լավ վարձ կը-  
տամ, — ասաց նա ու մահակն առավ, հետե-  
վիցս ընկավ:

Յես դուրս թռա ու վազեցի: Ել չեմ իմա-  
նում, թե ո՞ւր եյի վազում: Եղ որն ել ցորենի  
հորը բացել եյինք, մաքրել, վոր առափոտը  
լցնենք ցորենով: Ես մեր կատաղած Հանեսը  
մթնում չնկատեց, վոր հորը բաց է, վազեց հե-  
տևիցս ու թր՛մփ, ընկավ հորի մեջ:

Տեսա, վոր յետեվիցս մարդ չի վազում.  
փողոցում կանգ առա, ահանջ դրի: Ճիշտ վոր

Հանեսը չկար: Հետաքրքրվեցի, թե ի՞նչ յեղավ,  
ու դես ու դեն նայելով, զգուշանալով, դարձա  
դեպի տուն: Տեսնեմ՝ Հանեսանց բախում հա-  
րա յեն տալիս, ազնություն են կանչում ու  
զյուղացիք չորս կողմից հավաքվում են:

Վերջապես դուրս քաշեցին, բերին Հանե-  
սին: Նրա բաղդից հորն ենքան ել խոր չեր,  
շառ չեր ջարդվել:

Նդպես, սիրելի ընկերներ, եղ Հանեսը  
ինքն իրան լավ պատիժ տվեց. մի ամիս պառ-  
կեց: Հիմի ել, հո գիտեք, մի քիչ կաղում ե:


Վարձս, իհարկե, չտվեց, իսկ մայրս ել  
վախենալով՝ չզանգատվեց: Ասում եր՝ մեկ ե,  
որենքն ել նրա կողմը կպահի, քեզ վնջինչ չեն  
տա:

Դրանից հետո յես ել չմնացի ետեղ-  
զնացի մեր հարևան գյուղը: Գնում եյի, ճա-  
նապարհին տեղ-տեղ կանգ առնում, հիշում  
եյի Հանեսի ստացած պատիժը, ասում եյի  
մտքումս.

— Ա՛յ թե թրմփաց ե՛... .

Հիմա, ինչպես յերևում ե, Հանեսն ելի  
չի իրատվել, հիմի ել Սաքոյին ե ծեծել, բայց  
վնջինչ, Սաքո՛, ելի մի լավ թրմփոց կանենք:

— Տղերք, ասաց Հարոն, — պետք ե իմա-  
նաք, վոր ես անգամ թրմփոցն ուրիշ տեսակ ե  
լինելու: Բժշկից վկայական կվերցնենք,  
գործը կտանք դատարան, կկանչենք են բու-



լոր տղաներին, վորոնց Հանեսը ծեծել է:  
Ուրեմն, ընկերներ, վաղը Սաքոյի գործը  
հանձնում ենք դատարան: Համաձայն էք:  
— Համաձայն ենք:

\*\*\*

Սաքոյին ծեծելու համար Հանեսին դատի  
կանչեցին: Դատարանում նրան հարցրին.

— Դո՞ւ յես ծեծել Սաքոյին:

— Չե՛, դե յես ենպես... Չեռքս դի-  
պավ... հո չեմ ծեծել...

Բայց վկաները հաստատեցին, վոր Հանե-  
սը սուտ է խոսում: Նրա առաջվա բատրակի-  
ները յեկել էյին դատարան և պատմեցին, թե  
ինչպես նա միշտ ծեծում էր իրենց: Հանեսին  
վճռեցին մի տարվա կալանք:

Ուղղիչ տանից դուրս գալուց հետո, Հա-  
նեսը փափկել էր ինչպես բամբակ. իսկի ձեռք  
կբարձրացնե՞ր, վոր մեկն ու մեկին ծեծի:  
Վո՛չ, նա ավելի շուտ իր ձեռքը կկտրեր,  
քան թե այդպես բան կաներ:

Յերբ մի անգամ Սաքոն իր ընկեր բա-  
րակների հետ տեսավ Հանեսին, շատ խեղճա-  
ցած այդում աշխատելիս, նա ասաց.

— Տղերք, ես Հանեսն ե՞, մի տե՛սեք ի՞նչ  
որն է ընկել. ի՞նչպես է խեղճացել, ա՛յ թե  
թրմփաց ե՛... .

— Ա՛յ թե թրմփաց ե... — կրկնեցին նրա  
ընկերները:

## Լ Ե Վ Ո Ն Ի Ո Ւ Լ Ի Կ Ը

Անցյալ ամառը Լեոնը գյուղումներ, իր սպա-  
սի ու տատի մոտ: Ամառն այնպես լավ անցավ  
վոր Լեոնը մինչև հիմա ել չի մոռանում:  
Հաճախ հիշում է կանաչ սարերը, աղբյուր-  
ները, կովերն ու հորթերը: Շատ է հիշում  
իր ընկեր Պետիկին, բայց ամենից շատ գի-  
տե՞ք ում է հիշում — իր փոքրիկ ուլիկին:  
Աչնանը, դպրոցները բացվելու ժամանակ Լե-  
վոնը վերադարձավ քաղաք: Շատ էր ուզում  
հետը վերցնել և ուլիկին, բայց պապը չթո-  
ղեց, ասաց՝ ուլիկը քաղաքում կհիվանդանա:  
Լեոնը մինչև հիմա ել չի հանգստանում: Հա-  
ճախ նամակ է գրում Պետիկին, հարցնում է  
նրան, թե ի՞նչպես է ուլիկը:

Այ, հենց դրանից է, վոր Լեոնը հաճախ  
տխրում է: Անցյալ որը շատ վոր մտածեց ու-  
լիկի մասին, մի վոտանավոր գրեց:

Ախ, յե՞րբ կզա ամառը,  
ննդբեմ հայրիկիս,  
Ուղարկի ինձ գյուղը՝  
Տեսնեմ այժիկիս...

Մի շաբաթ առաջ Լևոնը նամակ ստացավ գյուղից. գրում էր Պետիկը.—

«Միրելի Լևոն, արդեն ձմեռ է: Առավոտները յեղյամ է նստում ձյունի նման: Քո պապի բոլոր այծերը միասին գոմումն են՝ տատիկը, մերիկը և թոռնիկը, այսինքն՝ քո ուլիկը: Յերբ այծերի առաջ խոտ ենք ածում, քո այծիկը ուրախ մկկում է, հետո սկսում է ուտել:

Ուլիկդ բավական մեծացել է, մինչև քո գալը լավ պոզեր կունենա: Դու գրում ես, վոր ուղարկենք քաղաք, բայց պապն ասում է՝ քաղաքում ուլիկին պահելը դժվար է: Վոչինչ, Լևոն՝ մինչև ամառ համբերի: Դե ի՞նչ անեմ, վոր չեն ուղարկում ուլիկիդ...

Մնաս բարև, Լևոն: Գրի՛ր քաղաքում ինչ լավ բաներ կան: Անցյալ որը մեր գյուղով մի ավտոմոբիլ անցավ, ա՛յ թե վազում էր է — ինչ ձի կհասներ նրան...

Քո Պետիկ»:

Լևոնը յերեք անգամ կարդաց նամակը, հետո սկսեց մտածել իր ուլիկի մասին: Ճաշի ժամանակ նա բոլորովին մոռացել էր, թե վո՛րտեղ է նստած և ի՞նչ է անում: Իր փոքրիկ յեղբայրը՝ Սուրենը, ուզեց կատակ անել. նա Լևոնի առաջից մի կողմը քաշեց նրա կերակուրի ափսեն: Լևոնը գզալը տարավ—բերեց, վոր ուտի, մեկ ել տեսավ՝ գզալը դա-

տարկ է: Նոր միայն նկատեց, վոր իր առաջ կերակուրը չկա: Բոլորը ծիծաղեցին, իսկ Լևոնը շփոթվեց ու կարմրեց:

— Ի՞նչ էս այդպես ուշքդ կորցրել, — ասաց մայրը:

— Նամակ եմ ստացել գյուղից:

— Յերևի քո ուլիկի մասին է գրած:

— Ի՞նչպես իմացար, մայրիկ:

— Աչքերիցդ յերևում է:

— Գիտե՞ս, մայրիկ, շատ եմ ուզում այծիկիս անանել:

— Վո՛չինչ, ամառը շուտ կգա, — ասաց մայրը:

Հետո, յերեկոյան թվաբանության դասը պատրաստելիս Լևոնը մի քանի անգամ սխալվեց. որինակ՝ ասում էր — վեց անգամ ութ — վաթսուներեթ, հինգ անգամ յոթը՝ քառասուն: Վերջացնելով դասերը, նա նորից սկսեց մտածել իր ուլիկի մասին:

Վո՛րքան բաներ էր հիշում Լևոնն իրենց գյուղից...

...Ամառվա պայծառ առավոտ էր. արևն ուրախ փայլում էր, թռչունները ծվլվում էյին: Լևոնը վաղ վեր կացավ, իսկույն վազեց ուլիկի մոտ: Ի՞նչ լավն է ուլիկը. սպիտակ է ու ճակատին սեվ բիծ ունի: Մի քիչ հաց ուտացրեց նրան, հետո վերցրեց յերեսսրբիչը ու վազեց մոտիկ աղբյուրը՝ վրացվելու: Ուլիկը



յետեից վազելով զնուժ եր, վզին կապած բո-  
ժոժը զընդզընգացնելով: Լեոնը լվացվեց,  
հետո ձեռքերը թաց արավ, քսեց ուլիկի յե-  
րեսին. ուլիկը չեր ուզում, մկկում եր, բայց  
Լեոնը ստիպում եր, փոր լվացվի: Հետո զը-  
նաց աուն, մի քիչ բան կերավ ու նորից դուրս  
յեկավ փողոց ուլիկի հետ: Գնաց զեպի ներ-  
քիվ, այգիների ճանապարհով:

Ահա և այգին: Լեոնը ներս մտավ, նրա  
յետեից ել ուլիկը: Պապն այդ ժամանակ  
հնձած խոտը դիզում եր: Լեոնը նստեց զեզի  
տակ: Քիչ անց յերևաց պապը: Նա յեղանի  
ծայրին բերում եր խոտի մի մեծ խորամ: Նա  
ուրախացավ, աեսնելով Լեոնին:

— Հը՛, բարով, Լեոն, յեկե՞լ ես:

— Ուլիկին ել եմ բերել, — ասաց Լեոնը:

— Հա՛, լավ ես արել:

Բայց պապն այս անգամ անուշադիր,  
խոտը ծուռ դրեց զեզի վրա, զեզի գլուխը  
բանդվեց ու հանկարծ ընկավ Լեոնի գլխին:

— Վա՛յ, ես ի՞նչ յեղավ, — ասաց պապն  
ու թողնելով ձեռքի յեղանը, շտապով սկսեց  
հետ տալ խոտը Լեոնի վրայից:

Լեոնի գլուխը բացվեց խոտի միջից:

— Ո՛հ, ինչ մութն եր պապի, ասաց նա  
ու դուրս ընկավ զեզից, վրաներով տանելով  
խոտի մնացորդները: Նա սկսեց ծիծաղել:

— Վո՛չինչ, վո՛չինչ, — ասաց պապը, —

մաքրելով Լեոնի վրա մնացած խոտերը—կմե-  
ծանաս, կմոռանաս:

Հետո Լեոնն անցավ կանաչ ծառուղիով  
ու նստեց կեռասենու տակ: Հանեց գրպանից  
փոքրիկ դանակը ու ծառի տակից կտրելով  
ավելորդ մի շիվ, — սկսեց շտկել ու տաշել:  
Ուլիկն էլ արածում էր ծառուղիում:

Մեկ էլ հանկարծ Լեոնը նայեց, տեսավ՝  
ուլիկը չկա: Իսկույն վեր թռավ, սկսեց  
փնտրել, պտտվեց չորս կողմը, բայց ուլիկը  
չկար ու չկար...

Նա այնքան տխրեց, վար քիչ էր մնում  
լաց լինի: Գնաց ավելի հեռու, ամեն կողմը  
աչք ածելով: Յերբ հասավ այդու ծայրը,  
հանկարծ մեծ թթենու մոտերքում լսեց ուլի-  
կի ձայնը.

— Մը'կըկ-մը'կըկ...

Ս'յ թե վորտեղ է այժիկը, — մտածեց նա  
ու գնաց դեպի ձայնը:

Տեսավ՝ Պետիկը նստել է մեծ թթենու  
յետևը ու տապ արել. իր ուլիկն էլ նրա կող-  
քին է:

— Դո՞ւ էս տարել ուլիկին, — հարցրեց  
Լեոնը բարկացած:

Պետիկը ծիծաղեց:

— Լա՛վ, Լա՛վ, մի՛ չարանալ—ասաց նա,  
յես էմ թագրել:

Լեոնը մոտ գնաց. ուլիկը նկատելով նը-  
րան, միկալով մոտ վազեց:

Պետիկը պատմեց, թե ինչպես ինքը ծա-  
ծուկ ներս է մտել այդին ու տարել է ուլի-  
կին այն ժամանակ, յերբ նա շատ էր հեռա-  
ցել Լեոնից:

Նրանք միասին զբոսնեցին այդում, թուխ  
և կերաս կերան, հետո գնացին դեպի տուն:

Յերբ դուրս յեկան այդիների ճանա-  
պարհը, հանկարծ նկատեցին, վոր իրենց յե-  
տևից գալիս է պիոներներ խումբը: Նրանք  
միացան խմբին, իսկ ուլիկն էլ հետևում էր  
Լեոնին:

— Մե՛կ-յերկո՛ւ, մե՛կ-յերկո՛ւ, — քայ-  
լում եյին պիոներները, նրանց հետ էլ Լեոնն  
ու Պետիկը, իսկ ուլիկը վազում էր, զը՛նդ-  
զը՛նդ հնչեցնելով իր բոժոժիկները:

Ու այսպես քայլելով գնացին մինչև  
տուն:

... Ո՛հ, ինչքան բաներ հիշեց Լեոնն իր  
ուլիկի մասին: Արդեն ուշ էր, քնելու ժամա-  
նակ էր, բայց նա դեռ նստած մտածում էր:

Լեոնն ուշքի յեկավ այն ժամանակ, յերբ  
մայրը մոտեցավ ու ձեռքը դրեց նրա գլխին:

— Լեոն, դու գիտե՞ս, վոր արդեն ուշ է,  
քո քնելու ժամանակն անցել է...

Լեռներ գնաց մայրիկի յետևից: Նա մի  
քանի անգամ հետ նայեց, կարծում եր, թե  
յետևից գալիս է իր ուլիկը...

Ո՛հ, ո՛ւլիկ, ո՛ւլիկ, վո՞րտեղ ես. թե  
վոր Լեռներ քեզ տեսնի, ուղղակի կգրկի ու  
կհամբուրի...

1927

## ԲԱՆՎՈՐ ՊԵՏԻԿԸ

Փոքրիկ Պետիկին մանկատան բոլոր օղա-  
ները սիրում էին, և ինքն էլ սիրում եր բո-  
լորին: Բայց Պետիկը սիրում եր և ազատ  
թափառելը:

Ահա յեկել է գարունը. Արևն ուրախ շող-  
չողում է մանկատան պատուհաններում. Հա-  
րաճճի ծտերը ժլժվում են բակում, ծառերի  
վրա. Ի՛նչ գուրեհյան բուրմունք է գալիս  
գաշտերից...

Պետիկը նայում է պատուհանից. ո՛հ,  
ի՛նչ լավ է հիմա դուրսը, ի՛նչ լավ է ազատ  
թափառելը...

Պետիկը նայեց, նայեց ու ինքն էլ չիմա-  
ցավ, թե ի՞նչպե՞ս դուրս յեկավ մանկատանից  
ու գնաց չրջելու քաղաքում:

\*\*\*

Պայծառ, տաք որ եր:

Պետիկը յերկար թափառում եր քաղաքի  
կենտրոնի լայն փողոցներով: Յերբ նա մի  
գեղեցիկ խանութի պատուհանում տեսավ

դարսած՝ յերչիկ, ապուխտ, յեփած հավեր,  
նա ուտելու մեծ ցանկութիւնն զդաց, բայց  
հանկարծ հիշեց, վոր փախել է մանկատանից  
և ուտելու վոչինչ չունի:

Պետիկն առաջ անցավ, սկսեց դիտել  
մյուս խանութները, բայց ուտելը մտքից չէր  
հեռանում:

Հիշեց իրենց մանկատան ճաշը. «Եսոր  
Գուրգենը, Պատվիկը, Կորյունն առանց ինձ  
կնասեն ճաշի ու մի լավ կուտեն, — մտածում  
էր Պետիկը, — իսկ յե՞ս... ի՞նչ պիտի ա-  
նեմ... «Սվելի լավ չի՞ վերադառնամ մեր  
մանկատունը», չէ՛, չէ՛, չեմ կարող յերևալ  
կառավարչուհու աչքին. յես նրան բարկացրել  
եմ, շատ եմ ամաչում...»

Այսպէս ինքն իր հետ խոսելով, Պետիկն  
առաջ եր գնում:

Մի տան մոտով անցնելիս նա տեսավ մի  
զոգնոցով մարդ, վորը կանգնած սպասում  
էր, շարունակ նայելով փողոցի կողմը:

— Փո՛ւհ, չեկավ, — ասաց նա, — գործս  
ուշացավ:


Պետիկը կանգ առավ նրա մոտ ու ինքն էլ  
անգիտակցաբար նայեց նույն կողմը:

Վարպետը նկատեց Պետիկին:

— Տղա, դու անգործ ե՞ս:

— Այո՛:

— Դե ա՛րի, ինձ ոգնի, վարձ կտամ:



— Լա՛վ, — ասաց Պետիկը ուրախանալով:

Ներս մտան գավիթը: Խոհանոցի մոտ մի փոքրիկ սենյակ էյին կառուցում: Պետիկը վարպետին քար ու ցեխ պիտի տար, իսկ վարպետը պիտի շարեր պատը:

Պետիկն սկսեց յեռանդով աշխատել:

Մի ժամից հետո յեկավ վարպետի ոգնահանը, մոտ տասնութ տարեկան մի տղա: Նա ասաց, վոր մայրը հիվանդ է, այդ պատճառով ել ուշացել է:

Վարպետը մի քիչ փնթփնթաց իր ոգնահանի վրա, հետո հանեց ծոցից փողը և տվեց Պետիկին:

Ուրախ-ուրախ Պետիկը դուրս յեկավ փողոց:

Իսկույն ներս մտավ կոտպերատիլի խանութը, կանֆետ գնեց և՛ անուշ-անուշ ուտելով շարունակեց իր ճանապարհը:

Քիչ ժամանակից հետո Պետիկն զգաց, վոր ելի քաղցած է: Նա կանդ առավ փողոցի անկյունում, մի ուրիշ կոտպերատիլի մոտ, նայում եր ազահությամբ չամիչին ու ընկույղին:

Այդ րոպեյին մի կին եր գալիս, ձեռքին մի վանդակ, մեջը լիքը հավերով: Նա կանչ առավ:

— Ա՛յ տղա, արի ետեղ, — կանչեց նա Պետիկին:

Պետիկը մոտ վազեց:

— Ա՛րի, հետս բեր ես հավերը, քեզ փող կտամ:

— Լա՛վ, — ասաց Պետիկը ու վանդակը վերցրեց, դրեց ուսին:

Բավական ծանր եր, բայց Պետիկն ուժեղ տղա յեր, դիմացավ ծանրության:

Վերջապես ներս մտան մի տան գավիթ, հետո բարձրացան սանդուխքներով ու կանդ առան խոհանոցի առաջ:

— Ա՛պրես, — ասաց տանտիրուհին ու հանելով գրպանից փողը, տվեց Պետիկին:

Պետիկը շճմել եր ծանրությունից ու հավերի աղբի հոտից. նրա ուսը ցավում եր: Ծանր շնչելով, դուրս յեկավ նորից փողոց:

«Ի՛նչ քիչ փող է տվել այսքան ծանր աշխատանքի համար» — մտածում եր Պետիկը... «Ի՞նչ առնեմ. չամի՞չ, թե հաց»... չե՛, ավելի լավ է հաց առնեմ. կանֆետով չկշտացա: Ու մտնելով անկյունի խանութը, Պետիկն իր ստացած փողով գնեց մի կտոր հաց ու տեղավորեց գրպանում:

Ուտում եր ու մտաբերում իրենց մանկատան ճաշերը. — «Հիմի յերևի Գուրգենը, Պատվիկն ու Կորյունը խոսում են իմ մասին... յերևի կարծում են, թե յես գնացել

եմ Մոսկվա... Ի՞նչ կա վոք, չէ՞մ կարող  
գնալ»...

«Բայց գուցե կարծում են, թե յես փողո-  
ցում վողորմություն եմ խնդրում... Ձե՛, չէ՛,  
ընկերներ, եղպես բան չկա. յես բանվոր եմ  
և աշխատավարձ եմ ստանում...»

Այսպես մտածելով Պետիկը դանդաղ  
քայլերով առաջ եր գնում մի յերկար փողո-  
ցով:

Մեկ ել տեսավ՝ հասել է յերկաթուղու  
կայարան:

Պետիկը մի անգամ յեկել եր յերկաթու-  
ղով, բայց լավ չեր հիշում: Այժմ նա կուզեր  
տեսնել ամեն ինչ:

Բարձրացավ սանդուխքներով, մտավ կա-  
յարանը:

Վո՛րքան մարդ եր հավաքվել... Բոլորն  
սպասում էին գնացքին:

Պետիկը դուրս յեկավ դիմացի դռներից  
ու անցնելով դեպի ձախ՝ գնաց յերկաթգծի  
ուղղությամբ, զարմացած նայելով վազոննե-  
րի յերկար շարքերին:

Նրա առաջ յերեաց մի մեծ շենք: Յեր-  
կաթուղու արհեստանոցն եր: Յերբ մտե-  
ցավ, մնաց ապշած աղմուկից: Աննկատելի  
կերպով ներս մտավ. վո՞չ վոք բան չեր ս-  
սում:

Հասնելով դարբնոցին՝ կանգ առավ:

Կրակներն այնպես էյին բռռում, կարծես  
հրդեհ եր ընկել: Այդ բուպեյին բանվորները  
մի կարմրած յերկաթ հանեցին կրակից ու  
սկսեցին արագ-արագ ծեծել մուրճերով: Կրա-  
կի կայծերը թռչում էյին չորս կողմը: Մի  
կայծ ել ընկավ Պետիկի գլխին. նա վախեցավ  
ու թռավ մի կողմը: Բանվորներն սկսեցին  
ծիծաղել:

— Ընկեր, այստեղ չի կարելի անդործ  
ման գալ. պետք է թուլլալություն սաա-  
նաք, — ասաց բանվորներից մեկը:

Պետիկը դուրս գնաց, դիմացի դռնից,  
բայց դրսից շարունակում եր դիտել:

«Ի՞նչ լավ է այստեղ, — մտածում եր Պե-  
տիկը. — ա՛խ, յեթե յես ել բանվոր լինե-  
յի»...

Ու սկսեց յերեակայել, թե ինքը բանվոր  
է: Ո՛հ, ի՞նչ կզարմանան Պատվիկը, Գուր-  
դենն ու Կորյունը...

Հանկարծ լավեց մի սարսափելի սուլոց:  
Շչակների ձայնն եր:

Պետիկն այնպես վախեցավ, վոք վազեց  
դեպի բակը ու չնկատելով, դեմ ընկավ մի  
բանվորի:

— Եստեղ ի՞նչ ես շինում, — հարցրեց  
բանվորը:

— Ուզում եմ բանվոր դառնալ, — ասաց  
Պետիկը կարմրելով:

— Դու դեռ փոքր ես, դեռ վախենում ես մեր շշակների ձայնից. բայց մի՛ վախենալ, ես ձայները նշանակում եմ, վոր մեր գործը վերջացել է: Վո՞րտեղ ես սովորում:

Պետիկն ավելի կարմրեց:

— Հը՛, ա՛սա, տեսնենք:

Պետիկն ստիպված յեղավ ամեն ինչ պատմել — թե ինչպես ինքը փախել է մանկատնից և ի՞նչ է արել նրանից հետո:

— Ա՛յ, լավ չես արել, — ասաց բանվորը, դու այնտեղ սովորում ես, առաջ ես գնում, իսկ փողոցներում ի՞նչ պիտի անես... Դե՛, արի հետս գնանք:

Պետիկը գլուխը կախ կանգնել էր ու վո՛չինչ չէր ասում: Բանվորը նորից համոզեց Պետիկին, վոր վերադառնա մանկատուն:

— Կգնաս ենտեղ, կսովորես, իսկ յերբ կմեծանաս՝ յես խոստանում եմ քեզ բանվոր ընդունել... Հը՛, գալի՞ս ես...

Պետիկը տատանվում էր: Հետո կամաց ասաց.

— Ամաչում եմ:

— Վո՛չինչ, մի՛ ամաչի. յես կխոսեմ կառավարչուհու հետ:

Ու միտին գնացին մակատուն:

Գնում էր Պետիկը, բայց ի՛նչպես էր ամաչում, ի՛նչպես էր նրա սիրտը լքվում: Նա

կուպեր յերեսը ծածկել, վոր վոչ վոք չտեսնի իրեն:

Հասան մանկատուն: Կառավարչուհին ժպտալով ընդունեց Պետիկին:

— Հը՛, փախստական, վո՞նց ես:

Պետիկը կարմրում էր ու կարմրում. կարծես կարմիր եյին ներկել նրան:

— Լա՛վ, վո՛չինչ, մի ամաչիլ, յես ներում եմ — ասաց կառավարչուհին:

Մի քանի րոպեյում մանկատանը լուր տարածվեց, թե Պետիկը վերադարձել է: Ընկերները յեկան և շրջապատեցին նրան:

— Ես ի՞նչ ե, կեղտոտվել ես. ինչ ասես չկա վրադ. հող են ածել վրադ, հավի աղբ կա... ասում եյին ամեն կողմից:

— Հա, ետոր սա փոքրիկ բանվոր էր դարձել. — ասաց Պետիկին բերողը: Շատ է շտապում:

Հետո նա պատմեց կառավարչուհուն, թե ի՞նչպես է հանդիպել Պետիկին ու հրաժեշտ տալով, դուրս գնաց:

... Պետիկն իր ընկերների մեջ է... ահա Գուրգենը, Պատվիկը, Կորյունը, Սուրենը... բո՛լորը, բո՛լորը... ի՛նչ ուրախ է Պետիկը... Նա մանրամասն պատմում է, թե ի՛նչէր տեսավ, թե ի՞նչպես փոքրիկ բանվոր դարձավ քաղաքում:

## ՅԵՍ ՇԵՂԱՓՈՒԱԿԱՆ ԵՄ

### 1. ՀՈՐՍ ՅԵՏԵՎԻՑ

Այն, ինչ վոր յես պատմում եմ, շատ առաջ եր, հին, ցարական կարգերի որերին:

Այն ժամանակ յես ութ տարեկան եյի:

Մի յերեկո նստած դաս եյի սովորում, յերբ ներս մտավ հայրս, մի կապոց ձեռին: Նա լվացվեց, փոխեց դործարանային շորերը, ու մոտենալով ինձ, շոյեց մազերս ու ասաց.

— Վաղը մայիսի մեկն է Արմիկ, վոր մեծանաս, դու ել կիմանաս, թե ի՞նչ է նշանակում այդ որը:

Հետո նա սկսեց ցածր ձայնով խոսել մայրիկիս հետ, բայց յես բոլորը լսում եյի: Ապա բաց արավ կապոցը, հանեց մի կարմիր շոր և նրա հետ տպագրած թերթերի մի հաստ փաթեթ:

Հորս խոսակցութունից յես իմացա, վոր մյուս որը բանվորները պիտի դուրս դանցույցի ցարական կառավարության դեմ, վոր

կարմիր շորը դրոշակի համար է, իսկ տպագրած թերթերը թուլցիկներ են, վորոնց մեջ գրած եր, թե բանվորները պետք է միանան և կովեն հին կարգերի դեմ:

Այդ բոլորը լսելով, յես ել չկարողացա գասս սովորել, շատ եյի հետաքրքրվում, թե ի՞նչ է լինելու մյուս որը: Հետո մտքումս դրի ինքս ել մի դրոշակ շինեմ և առավոտը գնամ հայրիկիս հետ:

Վեր կացա, փնտռեցի իմ կարմիր թղթերը, մի փոքրիկ դրոշակ շինեցի, ու մի փայտի վրա ամրացրի: Հետո սիւպտակ թերթիկներ կտրեցի ու վրան դրեցի այն, ինչ վոր հաճախ կրկնում եր հայրս:

— Պրոլետարներ'ը բոլոր յերկրների, միացե՛ք:

Հայրս նկատեց իմ խաղն ու մոտենալով ծիծաղեց:

— Արմիկ, — ասաց, — դու փոքրիկ հեղափոխական ես, ինչ վոր յես անում եմ, դու ել կրկնում ես:

Յես կարմրեցի ամաչելուց, բայց վոչինչ չպատասխանեցի. մտքումս ասում եյի՝ թե իմանաս հայրիկ վաղն ի՞նչ եմ անելու...

Հետեյալ առավոտը վաղ վեր թռա հորս հետ: Թեյ խմելուց հետո պայուսակիս մեջ դրի իմ դրոշակն ու թերթիկները և դուրս յեկա անից, իբր թե ուսումնարան. դնալու,

բայց մտքումս դրել էյի փողոցում սպասել  
հորս և գնալ նրա յետևից:

Մոտ մի ժամ սպասելուց հետո մեկ ել  
տեսնեմ՝ հայրիկս դուրս յեկավ տնից, և  
գնաց դեպի քաղաքի կենտրոնը: Յես իսկույն  
հետևիցի նրան, աշխատելով հեռու մնալ,  
վորպեսզի նա ինձ չնկատի:

Բայց մի տեղ նա հետ նայեց. և նկատեց  
ինձ, յերեվում եր շատ գարմացավ ու կանգ  
առնելով, ձեռքի նշանով կանչեց ինձ: Յես ա-  
մաչելով մոտ գնացի:

— Եստեղ ի՞նչ ես շինում, — հարցրեց:

Յես շփոթվեցի, ու չգիտեյի ի՞նչ ասեմ:  
Յանգնել էյի գլուխս կախ:

— Դե ա՛սա, մի՛ ամաչի:

— Ուզում եմ քեզ հետ գալ, — ասացի  
յես, նայելով հայրիկիս աչքերին:

— Չե՛, չե՛, չուտ արա, հե՛տ գնա, եսո՞ր  
յերեխաները չպետք է տանից դուրս գան,  
կռիվ է լինելու, ձիու վոտների տակ կընկնես,  
հասկացա՞ր:

Յես տեղից չեյի շարժվում:

— Չես գնո՞ւմ, — հարցրեց հայրիկը, —  
յես կարծում էյի, թե դու հասկացող տղա  
յես:

— Հայրիկ ջան, յես ել եմ ուզում մայի-  
սի մեկը տոնել, — ասացի յես արտասովելով:

— Ա՛յ թե չարածճին ես ե՛, — ասաց  
հայրիկը. դե վոր չես գնում տուն, լավ լսիր

ինչ վոր ասում եմ, և ճիշտ կկատարես —  
գնա մտիր ա՛յ են քաղաքային այգին, ու  
ներսից նայիր աջ կողմը. ամեն բան կտես-  
նես, միայն թե դուրս չգաս այգուց:

Յես խոսք տվի, վոր այդպես կանեմ:

Այդ բոլորը նա ասաց ցածր ձայնով,  
վորպեսզի ուրիշ անցորդները չլսեն: Հետո,  
կռանալով ականջիս, ավերացրեց.

— Վոչ վորի բան չատես, ե իմ յետևից  
ել չգաս:

— Լա՛վ:

Հայրիկը մտավ դիմացի նեղ փողոցը,  
իսկ յես գնացի դեպի քաղաքային մեծ այ-  
գին:


## 2. ՅՈՒՅՅՈԸ

Ներս մտա՝ քաղաքային այգին ու նստեցի  
ցանկապատին մոտիկ մի նստարանի վրա,  
աչքերս դարձրած դեպի հրապարակը:

Ի՞նչ անհամբեր էյի... չեյի կարողանում  
հանգիստ տեղս նստել, շարունակ ուզում էյի  
դուրս ընկնել այգուց:

Բավական յերկար սպասելուց հետո մեկ  
ել տեսնեմ — զանազան կողմերից յեկան  
խումբ-խումբ բանվորներ, ու կանգնեցին  
հրապարակում, այգու դիմաց:

Յես վեր թռա տեղիցս ու սկսեցի նայել  
աչքերս չորս արած. ուզում էյի տեսնել



Հայրիկիս: Քիչ անց նա յեւ յեկավ իր խմբով. արդեն հրապարակը լցվել է բանվորներով:

Յերկար մազերով մի մարդ բարձրացավ բանվորների ուսերի վրա ու սկսեց բարձր ձայնով խոսել: Նա շատ նման էր մեր ուսուցիչներից մեկին, վորին աշակերտները շատ էյին սիրում: Ի՞նչ էր ասում նա, — յես լավ չեյի լսում, և ինչ վոր լսում էյի, այն էլ լավ չեյի հասկանում, միայն տեսնում էյի, վոր բանվորները լսում են մեծ ուշադրությամբ, իսկ շատերն այնպես էյին վողեվորվում, վոր ճառի ժամանակ բացականչություններ էյին անում:

Շատ չանցած, ճառը վերջացավ և յերկար մազերով մարդը հանեց ծոցից թուղիկներն ու ցրեց չորս կողմը, բարձր ձայնով կանչելով:

— Կեցցե՛ հեղափոխությունը:

Ի ուրը ձայնակցեցին — Կեցցե՛... կեցցե՛...

Ողբ թնդաց բանվորների ուժեղ ձայներից:

Այդ ժամանակ Հայրս հանեց ծոցից կարմիր դրոշակն ու ամրացնելով ձեռքի վայտին, բարձրացրեց վերեւ: Այդ նկատելով բանվորներն ավելի թնդացրին իրենց «կեց-

ցեններն» ու ճառախոսի նշանով սկսեցին յերգել մի հեղափոխական յերգ:

Յես աչլես չհամբերեցի, վազեցի դեպի յերկաթե ցանկապատը, բարձրացա վերեւ ու հանելով իմ կարմիր դրոշակը, սկսեցի շարժել աջ ու ձախ, ապա կեցցե՛ր բլավելով ձգեցի բանվորների մեջ իմ պատրաստած թերթիկները:

Բայց այդ բոլորը յերկար շտեմեց, մեկ էլ հանկարծ նկատեցի, վոր ամեն ինչ իրար խառնվեց. մոտիկ փողոցներից դուրս թափվեցին ցարական վոստիկաններն ու ձիավոր կազակները և շրջապատեցին բանվորներին:

Սկսվեց կռիվը: Կազակները թրերը հանած հարձակվեցին, իսկ բանվորները — վորը փայտով, վորը քարերով պաշտպանվում էին:

Յես նայում էյի բարկութունից բուռնցրներս սեղմելով, արցունքներս գալիս էյին. ուզում էյի թռչել ցանկապատի այն կողմը, բայց ի՞նչպես կարող էյի այդ անել — չե՞ վոր խոսք էյի տվել հայրիկիս, վոր այգուց չեմ դուրս դալ:

Հանկարծ մի վոստիկան նկատեց իմ ձեռքի դրոշակը, վազեց դեպի ինձ, և ուզում էր բռնել, բայց յես ցած թռչելով, նորից ծոցս դրի դրոշակն ու սկսեցի վազել դեպի այգու հակառակ կողմի դուռը: Վոստիկանք

թռավ ցանկապատի վրայից ու վազեց իմ յետևից: Բավական տեղ յետևիցս ընկնելով, նա տեսավ, վոր էլ չի կարող հասնել ինձ և կանգ առավ ու ասաց հեվալով, ոռուսերեն.

— Ա՛յ դու սատանի ճուտ, յես քեզ ցույց կտամ:

Բայց ի՞նչպես պիտի ցույց տար, յես արդեն հեռու էյի...

### 3. ՀԱՅՐԻԿՍ ԲԱՆՏՈՒՄ

Դուրս գալով այգու հակառակ կողմից, յես պտտվեցի ու նորից դուրս յեկա հրապարակը: Հանկարծ տեսա հայրիկիս ու կանգ առա. նրան տանում էյին յերկու վոստիկան, թեփերից պինդ բռնած: Ինձ տեսնելուն պես հայրիկս աչք ունքով նշան արամ, վոր դնամ, հեռանամ, բայց յես այգպես շարի, այլ մի փոքր սպասելով, սկսեցի հետեւել նրան: Այդպես գնալով, հասա վոստիկանատուն ու համոզվեցի, վոր հայրիկին ներս տարան, ու հետո վազելով գնացի տուն:

Մայրս լեղապատառ սպասում էր փողոցում, մեր տան դռների մոտ:

— Արմիկ, եղ վո՞րտեղից ես գալիս, ո՞ւր է քո պայուսակը:

Նոր հիշեցի, վոր պայուսակս թողել էմ քաղաքային այգում:

Յես պատմեցի մայրիկիս իմ տեսածը:  
Նա մնաց դարմացած, ու ավելի վախեցաւ:

— Արմիկ, եղ ի՞նչպես դու համարձակ-  
վեցիր զնալ ցույցի, բա չես վախենո՞ւմ:

— Ձե՛, չեմ վախենում, — ասացի յես ու  
պատմեցի իմ դրոշակի ու ցրած թռուցիկնե-  
րի մասին:

Մայրս այնքան դարմացաւ, վոր չեր ու-  
զում հավատալ:

— Այ, տես, իմ դրոշակը, — ասացի յես  
հանելով ծոցիցս իմ կարմիր թուղթը:

— Դեռ ելի պետք և գնամ քաղաքային  
այգի, պայուսակս բերեմ, ասացի յես ու  
դուրս թռա տանից: Գնացի տեսա, պայու-  
սակս ընկած եր նստարանի վրա. վերցրի ու  
նորից վերադարձա տուն:

Յերեկոյան յես ու մայրիկը զնացինք  
վոստիկանատուն, բայց այնտեղ մեզ ասա-  
ցին, թե հայրիկին արդեն ուղարկել են դըլ-  
իավոր բանտը:

Մյուս ուրը մենք հայրիկի համար անկո-  
ղին տարանք, իսկ հետեյալ ուրերին յերեք տ-  
միս շարունակ տանում եյինք ուտելիղեն —  
կամ յես կամ մայրիկը:

Հայրիկս իմանալով մայրիկից իմ քաջու-  
թյան մասին, նամակով դրել եր (նամակն  
ուղարկել եր բանտից՝ դադտնի):

— «Սիրելի Արմիկ, յես իմացա զո հերո-

սաւթյան մասին, դու այժմ փոքրիկ հեղափո-  
խական ես, բայց մի՛ շտապիր, լավ սովորիր,  
վորպեսզի մեծանաս, և մեր հեղափոխական  
գործը շարունակես»...

Այդպես եր հին մայիսի տոնը, — ասաց  
քեռիս իր պատմությունը վերջացնելուց հե-  
տո. — այն ժամանակ մայիսի մեկը տոնելը  
հեղափոխություն և կռիվ եր նշանակում.  
այն ժամանակ մենք կռվում եյինք, վորպես-  
զի ձեզ, փոքրիկներիդ համար ուրախ մայիս  
պատրաստենք:

## ՔԱՉ ՊԱՅԱԿԸ

Լեռնիկը նոր էր վերադարձել պիտներահան լազերից: Նրա փոքրիկ յեղբայրն ու քույրը մեկ-մեկու յեռուից հարցեր էյին տալիս.


— Անտառումն էյի՞ք, — հարցնում է Բարկենը, — բա դադաններ չկայի՞ն:

— Ինչո՞ւ չե, կային, բայց ուրիշ տեսակ դադաններ էյին... յերկտանի...

— Ի՞նչպես թե յերկտանի, — հարցրին դարձացած Բարկենն ու Լուսիկը:

— Ա՛յ, պատեմ, լսե՛ք... Մի յերեկո պահակության հերթն իմն եր: Ամբողջ սրն անհամբեր սպասում էյի, թե յե՞րբ կգա իմ ժամը: Վերջապես խարույկի շուրջը զրույցից հետո պահակապետն ինձ հայտնեց, վոր գնամ իմ հերթին: Յես ել փայտս առա, ու շտապեցի դեպի լազերի մուտքը:

Կանգնեցի փայտն ուսիս դրած ու ձգվեցի, ինչպես իսկական պիտներ: Առաջին անգամն էյի պահակ կանգնում, բայց մտածում էյի — ի՞նչ կա վոր, ի՞նչու ձգեմ անավտո կանգնեմ:



Մի քիչ ժամանակից հետո, մեկ էլ տեսնեմ ինչ վոր մութը բաներ են շարժվում գեպի ինձ ու ինչ վոր ձայներ են լսվում — մը՛րթ-մը՛րթ... խը՛րթ-խը՛րթ... կարծես գազաններ եյին:

Մեկ մտածեցի, թե կարելի յե չներ են, բղավեցի:

— Ա՛շո՛ւն, կո՛րի:

Նրանք կանգ առան, բայց հետո ելի սկսեցին շարժվել, ելի մը՛րթ-մը՛րթ... խը՛րթ-խը՛րթ անելով:

Չե՛, չներ չեն, ուրիշ բաներ են... մտածեցի յես ու փայտս պատրաստ կանգնեցի, վոր պաշտպանվեմ:

Սպասում եմ ու աչքերս չռած նայում: Տեսնում եմ, վոր վոչ շան նման են, վոչ գազանի. մեկ սողալով են գալիս, մեկ բարձրանում, մեկ-մեկ էլ ինչ վոր սպիտակներ են յերևում:

Հանկարծ մի փոթկոց լսեցի, հետո էլ ծիծաղ... ա՛յ քեզ բան, ասում եմ ինքս ինձ. ես ի՞նչ տեսակ գազաններ են, համ մը՛րթ-մը՛րթ են անում, համ էլ ծիծաղում...

Տեսնեմ վտախ կանգնեցին ու բղավեցին.

— Բարկեն, վախիլ մի, մենք ենք...

— Ո՞վքեր եք, — բղավեցի յես խիստ ձայնով:

— Պավլիկն ու Սիմակը:

— Աղղանչա՞ն:

— Խարո՛ւյկ:

— Մոտեցե՛ք:

Նրանք ծիծաղելով մոտեցան ինձ, իսկ յես, վորպես պահակ հրամայեցի.

— Կանգնե՛լ հանգիստ:

Նրանք կանգնեցին առաջս:

— Վո՞րտեղից եք գալիս:

— Շատ հեռվից, — ասաց Սիմակը ծիծաղելով, — հենց լազերից... ուզում եյինք կատակ անել, համա լավ քաջ ես յեղել, չվախեցար...

Դու մի առիլ այդ անպիտաններն ուղեցել են ինձ վախեցնել, այդպես մըրթ-մըրթ անելով գալիս են, իբր թե գազաններ են: Վերաբերվումներով ծածկվել են, բայց մեկ-մեկ նրանց շորերն սպիտակին եյին տալիս:

Յես չվացրի. գիտե՞ք, ինչ լավ ե գիշերը չվացնելը...

— Դե լա՛վ, Բարկեն, թո՛ղ տուր, գընանք, — ասաց Սիմակը, էլ ո՞ւր ես չվացնում:

— Պահակապետին կանչում եմ, վոր նրան հանձնեմ ձեզ:

— Չի՛ հարկավոր...

Նրանք ուզում եյին ինձ փորձել — իբր տեսնեք — գիտե՞ կանոնները, թե չե: Բայց յես շատ լուրջ եյի, իսկական պահակ եյի, չհամաձայնվեցի:

Քիչ անց յեկավ պահակապետը:

— Ի՞նչ է պատահել:

Յես հայտնեցի, վոր ընկերներն ուշացել են, չասի թե նրանք ինձ ուզում էյին վախեցնել: Ի՞նչ կարիք կար, յես հո վախիտ չեյի:

— Ո՞վքեր են:

— Պավլիկն ու Սիմակը:

Նա մտաեցավ:

— Վո՞րտեղից եք գալիս:

— Լազերից:

Ընկերները պատմեցին իրենց կատակի մասին: Սիմակը քիչ եր մնում ծիծաղի, բայց իրեն զսպեց:

— Ձեզ նկատողություն եմ անում, — սասաց նա. — հետեցեք ինձ:

Ու քայլեց դեպի մեր բազան:

... Հիմի իմացա՞ք, թե ինչ գազաններ էյին. յերկուտանի գազաններ... Եղ անպիտան Պավլիկն ու Սիմակն էյին...

## ՈՒՐԱԽ ԳԱՐՈՒՆԸ

Մի որ մենք՝ յերեխաներս, խմբով ներս մտանք քեռի Տիգրանի մոտ ու լցրինք ամբողջ դրասենյակը:

— Ո՞հ, ես ինչ շատվոր եք, — սասաց քեռի Տիգրանը. ի՞նչ կուզեք, փոքրիկներ:

— Մենք ուզում ենք... — սկսեց Լևոնն ու ամաչելուց կամրեց, ել չկարողացավ բան ասել:

Յերվանդն տգնության հասավ նրան.

— Քե՛ռի, Տիգրան, մենք ուզում ենք պարտեզ շինել, խնդրում ենք ոգնեք մեզ...

— Լավ բան եք վճռել, — սասաց քեռի Տիգրանը. — բայց կարո՞ղ եք աշխատել:

— Կարող ենք, — հանկարծ ձայն տվինք բոլորս միասին:

— Իե վոր այդպես խոսք եք տալիս, ձեզ մի փոքրիկ պարտեզի տեղ կտանք, մեր տնտեսության աջում:

Քեռի Տիգրանը մեր դյուղի կոլտնտեսության նախագահն էր. նա խնդրեց դյուղատընտեսին, վորպեսզի նա մեզ սովորեցնի, թե ի՞նչպես պետք է սնկել ու խնամել ծառերը:

Գյուղատնտես ընկեր Վարդանը չատ ու-  
րախացավ և խոտացավ մյուս առավոտ սկը-  
սել մեր պարտեզի աշխատանքը: Հետո մի  
գրություն տվեց, վոր պահեստից մեղ տան  
փոքրիկ ծառեր և կանաչեղենի սերմեր:

Մենք պահեստից ծառերը վերցրինք և տա-  
րանք դրինք կոլտնտեսության գավթում:  
Մերմերն էլ պահեցինք մեր տանը:

Մյուս որը վաղ վեր կացանք ու վազեցինք  
դեպի կոլտնտեսության բակը:

Ա՛յ քեզ բան... տեսանք՝ ծառերը չկան...

Տխուր նայում եյինք իրար ու զարմանում,  
թե ո՞վ պիտի տաներ ծառերը:

Սկսեցինք փնտրել. չկա՛ր ու չկա՛ր:

Վերջապես դտանք քեռի Սիմոնին. նա կալ-  
տնատեսության գոմապահն էր և գավթի հրո-  
կոցը:

— Քեռի Սիմոն, մեր ծառերն ո՞ւր են:

— Ի՞նչ ծառեր, չեմ տեսել...


Բոլորս միասին չըջապատեցինք նրան:

— Քեռի Սիմոն, գաի՛ր մեր ծառերը,  
այս գավթումն ենք թողել... Քեռի, քեռի,  
կանչում եյինք ու քաջում նրա փեշերից:

— Լա՛վ, լա՛վ, կփնտրեմ, — ասաց նա.  
— Ես ի՛նչ ճղավան տղաներ եք, գե մի բաց  
թողեք, զնամ տեսնեմ:

Նա զնաց դեպի գոմը, մենք էլ նրա յե-  
տևից:

Գոմի մութ անկյունում նա կանգ առավ:



— Վա՛յ, ետեզ ե յեղեւ,— ասաց թնոի Սիմոնը.— փո՛ւհ, սխալվել եմ... Հենց իմացել եմ ավելներն են, բերել եմ գոմում պահել... ծերացել եմ, աչքերս լավ չեն տեսում...

Ո՛հ, ինչպես ուրախացանք, վոր ծառերը դանվեցին, ուրախությունից չնկատեցիրք, ծառերի հետ դուրս տարանք և Սիմոնի ավելները: Եւ վազեց մեր յետեվից:

— Ա՛յ տղաներ, եզ ի՞նչ արիք, բա ի՞մ ավելներն ի՞նչի յեք տանում հեաներդ:

Մենք թողինք ավելներն ու ծառերի կապոցները շալակելով, շտապեցինք դեպի կոյսնտեսության այգին:

Այդում արդեն մեզ սպասում էր գյուղատնտես ընկեր Վարդանը: Եւ ցույց տվեց մեր կարտեզի տեղը, հետո նշաններ դրեց, վորպէսզի փոսեր փորենք ծառերը տնկելու համար: Ընդամենը քսան ծառ եր, բայց մեր կոյեկախվում տասներինը հողի էյինք:

Սկսեցինք բահերով փորել փոսերը: Ի՞նչ ծիծաղ եր. մի քանիսը լավ չէյին կարողանում փորել, իսկ Բարկենն այնպես պինդ խփեց վոտով բահին, վոր մեջքի վրա վայր ընկավ դեպին: Ծիծաղից թուլացանք:

Հանկարծ ընկեր գյուղատնտեսը նկատեց իմ փոքրիկ՝ չորս տարեկան քրոջը—Նունիկին: Եւ յեկել եր հենց այնպես, նայելու՝ թե ի՞նչ երք անում:

— Փոքրիկ, դու ե՞ր ես կոյեկախվում,— հարցրեց թնոի Վարդանը:

— Չէ:

— Կուզե՞ս ծառ տնկել:

— Կուզեմ:

— Իե, յես քեզ համար փոս կփորեմ, իսկ դու ծառը կտնկես. դու կլինես քսաներորդը, լա՛վ...

— Լա՛վ:

Շուտով բոլոր փոսերը պատրաստ էյին, ընկեր գյուղատնտեսը բաժանեց ծառերը, մեկն ել տվեց Նունիկին:

Սկսեցինք ծառերը տնկել:

Հանկարծ մի ծիծաղ բարձրացավ:

Իխո՞ք ինչ եր պատահել.—մեր Նունիկը ծառը տնկել եր վոչ թե արմատի կողմից, այլ մյուս ծայրից:

Գյուղատնտեսն իսկույն ուղղեց Նունիկի սխալը և ցույց տվեց, թե ի՞նչպես պետք եր տնկել: Նունիկը շատ ուրախացավ:

Յերբ գործը վերջացավ, ընկեր գյուղատնտեսն ասաց.

— Փոքրիկ ընկերներ, վաղը յես ձեզ կրամ տախտակներ, ամեն մեկը տախտակի վրա կգրի անունը և կկախի ծառից: Իսկ փոքրիկ Նունիկին եւ ամենքդ կողներ: Լավ չե՞մ ասում:

— Լա՛վ ե, լա՛վ.—ասացինք մենք, չբնայատելով թնոի Վարդանին:

Հետևյալ որը մենք շարունակեցինք գործը:  
Վարեցինք պարտեզը, ցանեցինք կանաչեղենը,  
ծառերի վրա կախեցինք մեր անունները:  
Իսկ զրանից հետո յեքրեմն գնում եյինք, նա-  
յում ծառերին, հետևում. ամեն մեկն իր  
փոքրիկ ծառին եր նայում:

Այսպես անցավ մի ամիս:

Մի որ ել գնացինք, ի՞նչ տեսանք... մեր  
ծառերը կանաչել եյին...

Ուրախությունից թռչկոտում եյինք, ճը-  
շում: Շրջապատել եյինք ընկեր գյուղատնտե-  
սին ու մեր աղմուկով չեյինք թողնում  
վոր խոսի: Վերջապես նա ձեռքով նշան արավ,  
վոր լռենք, ապա ասաց.

— Փոքրիկ ընկերներ, չնորհավորում եմ  
ձեր պարտեզը, բայց մի բան մտապել եք...  
Ի՞նչ պետք է դնենք նրա անունը: Ապա մի  
մտածեցեք...

Բոլորս սկսեցինք մտածել:

— «Ուրախ դարուն», — բղավեց մեր ընկեր  
Կարենը:

— Հա', հա', հա', — ձայն տվինք բոլորս:

— Դե, լա՛վ, — ասաց ընկեր գյուղատնտե-  
սը, — ուրեմն ձեր պարտեզի անունը կդնենք  
«Ուրախ դարուն»...

## ԻՆՉՊԵՍ ՅԵՍ ՏԵՍԱ ԼԵՆԻՆԻՆ

Յերեկոյան յես, Կարենն ու Շուշիկը կար-  
գում եյինք Լենինի մասին, նայում եյինք  
նրա պատկերները: Վճռեցինք պատի թերթում  
գրել «Լենինի մանկուք-յունը» և պատկերներն  
եւ փակցնել վերևը:

Հետո Շուշիկն ու Կարենը գնացին, յես  
մնացի մենակ: Թեպետ ուշ եր, բայց ելի շա-  
րունակեցի կարգալ:

— Հետն, դե բավա՛կան ե, կհոգնես, գնա  
քնի՛ր, — ասում եր մայրիկս:

— Ա՛յ, իսկույն, մայրիկ, շուտով կվեր-  
ջացնեմ, — ասում եյի յես, — մի քիչ ել կար-  
դամ, հետո կքնեմ:

Այսպես կարդում եյի, չլսելով մայրիկիս:  
Արդեն աչքերս կաշում եյին, բայց ելի չեյի  
պոկվում գրքից: Յերկու անգամ ննջեցի,  
գլուխս թափահարեցի, բայց ելի զարթեցի:

Հետո հիշում եմ, լսեցի մայրիկիս ձայնը:

— Լեոն, քնե՞լ ես, — հարցրեց նա:

Ու մեկ ել հիշում եմ, վոր մայրիկը զար-  
թեցրեց ինձ ու ձեռքիցս պինդ բռնելով, տա-  
րավ դեպի անկողինս:

Իրանից հետո ել միտս չի, թե ի՞նչպես  
հանվեցի ու պառկեցի: Միայն գիտեմ, վոր  
յերազում հանկարծ ընկա մի ուրիշ սեղ, շա՛տ  
հեռու տեղ...

Իբրև նստեցի ողանալ ու թուա դեպի  
Մոսկվա.

— Ո՞ւմ մտտ եք գնում, — հարցրին ինձ,  
յերբ տեղ հասանք:

— Մեր մեծ ուսուցիչ Լենինի մտտ:  
Ինձ տարան Լենինի քնակարանը:

— Ա՛, Լևոն, բարև, — ասաց Լենինը, մա-  
զերս շոյելով. — այդ ի՞նչպես ես յեկել:

— Ողանալով:

— Ոհո՛, ինչ քաջն ես յեղել... Իսկ ըն-  
կերներդ՝ Կարենին ու Շուշիկին ել բերե՞լ  
ես հետդ:

— Չե, նրանց խմաց չեմ արել:


— Մյուս անգամ վոր դաս, հեազ կբե-  
րես: Իե, քաջ Լևոն, պատմիր տեսներք: Ի՞նչ  
կա ձեզ մտտ:

Յես սկսեցի պատմել մեր հոկտեմբերիկ-  
ների մասին:

— Լա՞վ եք սովորում, իրար ողնո՞ւմ եք,  
հարցրեց նա:

— Այո՛, յես Շուշիկին եմ ողնում, իսկ  
Կարենը՝ ինձ:

— Իսկ դո՛ւ, փոքրիկ Լևոն, քաղցր բան



սիրո՞ւմ ես. ուզում եմ քեզ մի տուր կան-  
Փետ ընծայեմ:

— Չե՛, չնորհակալ եմ— ասացի յես ու  
ամաչելուց գլուխս կախեցի:

— Դե լա՛վ, կուզե՞ս հոկտեմբերիկի մի  
նախշուն շոր ընծայեմ:

— Չե՛, չե՛, չնորհակալ եմ...

— Բա ի՞նչ կուզես, Լևոն, մի ասա՛ տես-  
նեմ:

— Յես կուզեմ, քեռի Լենին, վոր դու ինձ  
հետ դաս և միշտ մեզ հետ լինես:

— Այդպե՞ս... Լա՛վ: Քո խնդիրը կկա-  
տարեմ: Դու կգնաս, կասես քո ընկերներին,—  
յեթե նրանք լավ հոկտեմբերիկներ լինեն, լավ  
սովորեն, լավ ընկերներ լինեն, իրար սիրեն և  
ոգնեն—յես միշտ ձեզ հետ կլինեմ... Իմա-  
ցա՞ր...

— Այո:

— Ուրեմն, Լևոնի՛կ, ինչ վոր ասացի՛  
չմոռանաս... Իսկ ես գիրքն ել քեզ ընծա —  
այստեղ իմ պատկերներն են:

Յես վերցրի գիրքն ու մնաս բարով ասե-  
լով, դուրս յեկա: Նստեցի ողանով ու ճանա-  
պարհ ընկա: Մտքումս շարունակ կը՛լնում էյի  
Լենինի խոսքերը, վորպեսզի չմոռանամ:

Բայց մի տե՛սեք, ի՞նչ դժբախտություն  
պատահեց: Հենց վոր իջա ողանավից, մեկ ել  
հանկարծ մոռացա խոսքերը...

Ախ, ի՞նչ պիտի անեմ,— մտածում էյի  
յես.— ի՞նչ պիտի ասեմ իմ ընկերներին:

Այսպես տանջվում էյի, ու շտապում դե-  
պի տուն...

Մեկ ել հանկարծ աչքերս բաց արի, տես-  
նեմ՝ մայրիկս ձեռքը քսում է թշերիս.

— Մայրիկ, յես վո՞րտեղ եմ:

— Մեր տանն ես, քո անկողնումը...

— Մի՞թե... բա են ի՞նչ ասաց Լենինը...  
մոռացել եմ, մայրիկ, ձեռքդ ելի քսիր յերե-  
սիս, կարելի յե հիշեմ...

— Հա, Լևոնիկ, եղ ի՞նչ անհանգիստ ե-  
յիր քնած,— ասաց մայրիկը.— յերևի շատ ե-  
յիր հոգնել յերեկոյան. ինչե՞ր էյիր խոսում  
յերազումդ...

— Ի՞նչ էյի ասում, մայրիկ:

— Ասում էյիր ու կրկնում— «յեթե դուք  
լավ հոկտեմբերիկներ լինեք, լավ ընկերներ  
լինեք, միշտ իրար ոգնեք, յես ձեզ հետ կլի-  
նեմ»—...

— Վա՛յ, մայրիկ, հենց այդ խոսքերն  
են,— ասացի յես, վեր թռչելով տեղիցս ու  
պինդ բռնելով մայրիկիս ձեռքը.— մեկ ել ա-  
սա:

Մայրիկը մեկ ել կրկնեց:

— Դե հիմա գրի՛ր թղթի վրա:

Մայրիկը գրեց թղթի վրա, Լենինի խոսքերը, իսկ յես շտապով հագնվեցի ու թուղթն առնելով դուրս վազեցի տանից, գնացի Շուշիկի ու Կարենի մոտ, վորպեսզի յերազս պատմեմ :

## ՓՈՔՐԻԿ ԿՈՍՄՈՒՆԱՐԸ

Յերեկոյան յես արդեն պառկել էյի անկողնում, յերբ հանկարծ ականջովս ընկավ հայրիկիս ձայնը. նա խոսում էր մայրիկիս հետ.

— Դե, մնա՛ս բարով, — ասաց նա, — դուցե ել չվերադառնամ. թշնամիներն արդեն չըջապատել են մեզ...

Յես բարձրացրի դուրսս և տեսա, ինչպես մայրիկս թաշկինակով սրբեց արցունքները, իսկ հայրիկս հանգստացնում էր նրան:

— Վո՛չինչ, Լուիզ, մի վախենալ, մենք դեռ քաջ կովորներ շատ ունենք:

Հետո հայրիկս մոտեցավ իմ անկողնին. նա կարծում էր, թե քնած եմ: Հենց վոր կըռացավ վոր ինձ համբուրի, յես վեր թռա, նստեցի անկողնումս.

— Ոհո՛, Ժան, դեռ չես քնե՞լ. դե մնաս բարե՛վ, յես շտապում եմ. կովի պիտի գնամ:

Նա համբուրեց ինձ ու ասաց.

— Սիրելի Ժան, լավ կսովորես, քաջ տըզա կդառնաս, վորպեսզի մեծանաս յեվ իմ տեղը բռնես:

Ասաց ու դուրս գնաց: Յես նայեցի նրա  
յետևից ու մտածում եյի— ի՞նչ լավ կլինե՞ր  
յես ել հայրիկիս նման զինված կռվի գնայի...

Հետո յես մտածում եյի,— վոր մեծա-  
նամ, հորս և պապիս նման բանվոր կլինեմ.  
Իմ ընկերների հետ պատերազմ կգնամ: Մենք  
միասին հաղթութուն կտանենք ու մի մեծ  
հանդես կսարքենք, ինչպես կոմունայի առա-  
ջին որը...

Ա՛խ, ի՞նչ լավ եր այն որը. լավ հիշում  
եմ, ինչպես մայրս տարավ ինձ հանդիսավոր  
տոնին: Ի՞նչ մեծ բազմութուն եր հավաքվել  
մեր քաղաքի՝ Պարիզի մեծ հրապարակում.  
վորքա՞ն դրոշակներ եյին շարժվում. ամեն  
կողմից լավում եր.


— Կեցցե՛ կոմունան, կեցցե՛ բանվորների  
իշխանութունը:

Իսոյ մի քանի որից հետո քաղաքը շրջա-  
պատեցին թշնամու զորքերը. դրանք բուր-  
ժուաների զորքերն էյին, վորոնք ուզում էյին  
փոշնչացնել կոմունան: Ահա դրանց զեմ էյին՝  
կռվում մեր բանվորները, իսկ նրանց հետ ել՝  
դուրս են քշել նրանց:

Այսպես մտածելով յես աննկատելի ընկա-  
խոր քնի մեջ:

\*\*\*

Առավոտը վաղ զարթեցի աղմուկից: Հա-  
րեվան սենյակում մայրիկիս հետ խոստում եր



մի զինված բանվոր: Յերբ վեր կացա, մայրիկըս պատմեց, թե ի՞նչու եր յեկել քեօի Վարենը.— մեր պապին վիրավորել էյին կովում. ընկերներն ուղարկել էյին նրան զինվորական հիվանդանոց:

— Գիտե՞ս, ժան,— ասաց մայրիկս,— այսօր միասին կգնանք պապին տեսնելու:

Մի ժամից հետո յես ու մայրիկս դուրս յեկանք փողոց: Գաղաքում այս ու այն կողմն էյին քայլում մեր զինված բանվորները. նրանց թեվերին կարմիր նշաններ կային: Հեռվից լսվում էր թնդանոթների ձայնը.

— Բո՛մ... Բո՛մ... Բո՛մ...

Մենք հասանք զինվորական հիվանդանոց, բայց չկարողացանք տեսնել պապիս. այդ որը բժիշկները նրա վրտից պիտի հանեյին գնդակը:

— Վոչինչ,— ասաց մայրիկը,— այժմ դու սովորեցիր ճանապարհը և մենակ կգաս պապի մոտ:

Յերկու օրից հետո յես մենակ գնացի պապի մոտ: Նա պառկած էր անկողնում: Յերբ յես մտայցա, նա ինձ համբուրեց.

— Ի՞նչպես ես, պապի. լավ ե՞ս: Մայրիկը բարեվում է:

— Հա՛, լավ եմ. գնդակն արդեն հանել են վրտիցս... Ի՞նչ լուր ես բերել մեր կովից:

— Մայրիկն ասաց, վոր յերեկ թշնամին

մի տեղից ներս ե մտել քաղաք, բայց մերոնք դուրս են քչել նրանց:

Պապս ուրախացավ, ձեռքով շոյեց թշիկս ու ասաց.

— Դե, մայրիկին կբարեվես. մյուս անգամ վոր գաս, նոր լուրեր կբերես ինձ համար:

Յես վերադարձա տուն յեվ պատմեցի մայրիկիս, ինչ վոր ասաց պապը:

\*\*\*

Յերեք օրից հետո յես նորից պիտի գնայի պապիս մոտ, բայց մայրս ասաց.—

— ժան, այսօր չի կարելի գնալ. շատ վտանգավոր է... թշնամու թնդանոթների ոտմբերն արդեն մեր թաղն են հասնում...

Յես մնացի տանը, բայց չէյի կարողանում հանգիստ մնալ. շարունակ դուրս էյի նայում պատուհանից, շա՛տ էյի ուզում տեսնել պապիս, բայց մայրիկս չեր թողնում:

Վերջապես, ել չհամբերեցի, դուրս գնացի փողոց ու քայլեցի դեպի հիվանդանոց:

Ո՛հ, այդ օրը շատ անհանգիստ եր, ամեն կողմից խումբ-խումբ բանվորներ էյին գնում՝ ոգնելու կովոզներին. գնում էյին նույնիսկ կանայք: Չորս կողմից լսվում էր թնդանոթների բոմբյունը, հրացանների ճարճատյունը: Ոգի մեջ տարածվել էր վառողի հոտը: Յես հասկանում էյի, վոր թշնամին

արդեն մտել է քաղաք... ահա թե ինչու մայրիկը չեր թողնում ինձ...

Բայց յես ելի շարունակեցի ճանապարհը: Շատ եյի շտապում. գնում եյի համարյա վազելով: Վերջապես հասա հիվանդանոց ու հեվիհեմբ բարձրացա վերև:

Տեսնեմ՝ պապս շորերը հաղած, թեմբին կարմիրը կապած, հրացանն ուսին կանգնած է մուտքի մոտ:

— Ա՛հ, Ժան, ի՞նչու յեկար—ասաց պապը, համբուրելով ինձ. շատ վտանգավոր ե...

— Մայրիկս չեր թողնում, բայց յես յեկա...

— Լավ չես արել, վոր յեկել ես. բայց վոչինչ, յես քեզ կհասցնեմ մինչեմ մեր տուն, հետո ինքս կգնամ կովի...

Շուտով ինչ վոր մարդ յեկավ, պապիս հանձնեց մի դրոշակ ու մի թուղթ: Պապս թուղթը ծոցը դրեց ու մենք ճանապարհ ընկանք: Յես նկատեցի, վոր պապը դեռ չի բժշկվել. նա կաղում էր, բայց արագ էր քայլում:

Դեռ նորեյինք անցել յերկու փողոց, յերբ մի խումբ զինվորներ անցան. նրանք ուրիշ տեսակի շորերով էյին: Պապս մի քոպե կանդ առավ շվարած.

— Ի՞նչպես.— ասաց նա.— թշնամիները քաղաք են մտել... ու նորից շարժվեց

առաջ, արագացնելով քայլերը:

Հանկարծ յերկու զինվոր յերևացին մեր դիմաց. նրանք էլ թշնամու հագուստով էյին:

— Կանդե՛՛ր—հրամայեց նրանցից մեկը.

Ու իսկույն հարձակվեցին պապիս վրա: Պապս դիմադրում էր.— նրանք աշխատում էյին խել դրոշակը, բայց նա չեր ապխտ: Յես հասա ողնության, բայց զինվորն ինձ սաստիկ հրեց ու յես վայր ընկա:

Հետո նորից վեր կացա, ու մոտենալով, քաշեցի դրոշակի կարմիր կտորից. քաշեցի ու պոկեցի փայտից...

Պոկեցի գրոշակն ու փախա, ա՛յնպես արագ, ինչպես ծիտը կարող էր թռչել...

Զինվորներից մեկը յետեվեցս ընկալով, ուզեց բռնել, բայց ի՞նչպես կարող էր ինձ հասնել: Նա կրակեց իմ յետևից, բայց գնդակը վզգալեն անցավ մոտովս ու դիպավ պատին:

Յես վազեցի փողոցից փողոց. հասա մեր տուն, ու շեշտապառ ընկա մայրիկիս գիրկը.

— Մայրիկ, յես ազատեցի մեր դրոշակը... պապին տարան... թշնամու զինվորները—ասացի հեմալով:

Մայրիկս համբուրեց ինձ:

— Ապրես, Ժան.— ասաց— ուրեմն հայրիկը ճիշտ էր ասում՝ դու քաջ տղա յես. վոր մեծանաս՝ նրա տեղը կրռես...



Տէի. խմբագիր՝ Լ. Ոհանյան  
Սրբագրիչ՝ Ս. Փարսադանյան

Իլալիտի լիպոյր՝ Կ— 4699. Հրատ. 3969

Պատկեր 86 Տիրած 4000

Թուղթ 74×110 Տպագրական 3½ մամուլ

Մեկ մամուլում 41960 նիշ. Հեղինակային 3½ մամ.

Տրված է արտադրութեան 9 հունվարի 1937 թ.

Ստորագրված է տպագրութեան 7 դեկտեմբերի 1937 թ.

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ, ՅԵՐԵՎԱՆ, ԼԵՆԻՆԻ ՓՈՂ. 65

«Ազգային գրադարան»



NL0392857

7145

ՀԻՆԸ Զ ռ.

209

ԱՐԱԶԻ  
ДЕТСКИЕ РАССКАЗЫ  
ГИЗ. АРМ. ССР. ЕРЕВАН